Հայաստանի տիտղոսի 2600 վերդրոպոս վիրտոսոմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ 2600 ՏԱՐՎԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհագրական, քարտեզագրական և պատմական իրավիճակի փոփոխությունները

Երաշխավորված ուսումնական նյութ

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ

Հայերեն հրատարակություններ

- *Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ, հայերեն և ռուսերեն, Փրինթինֆո, 2005 թ.:*
- *Նույնը եռալեզու՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, Տիգրան Մեծ, 2015 թ.:*
- *Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում, Կոմիտասի ինստիտուտ, 2007 թ.:*
- *Հորինված պատմություն. Ադրբեջան, Հայաստան. կեղծիքներ և փաստեր, Կոմիտասի ինստիտուտ, 2010 թ.:*
- *Հայաստանը օտարների քարտեզներում, Զանգակ, 2014 թ.:*
- *Ադրբեջանի պատմաաշխարհագրական զեղծարարությունները, Զանգակ, 2017 թ.:*
- *Հայ քարտեզագրության պատմությունը մինչև 1918 թ., Զանգակ, 2017 թ.:*
- *Հայոց պատմությունը քարտեզների միջոցով, Ակնարկ, Զանգակ, 2019 թ.:*
- *Հայաստան, Ադրբեջան և Թուրքիա. Մշակութային, աշխարհագրական և պատմական հակասությունների քննարկում, Զանգակ, 2020 թ.:*

Կազմի վրայի կարպետի պատկերը Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղի Լևոն Գալչյան արվեստանոցի սան 14–ամյա Տոյա Հարությունյանի աշխատանքն է:

Բոլոր լեզուներով գրքերի և հոդվածների ցուցակի համար տես հեղինակի կայքը.
www.roubengalichian.com



20–րդ դարի սկզբի Օսմանյան կայսրության «Ընդհանուր պատմություն» դասագրքից վերցված քարտեզ, որը ներկայացնում է Միջին Արևելքը հնագույն ժամանակներում: Գրատուն «Ասգարի», քարտեզի գծագրող՝ Իբրահիմ Հիլմի:

Ռ. Գալչյանի հավաքածու, Երևան, Մատենադարան, Ref. RG-127

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության
կողմից երաշխավորված ուսումնական նյութ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ 2600 ՏԱՐՎԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհագրական, քարտեզագրական և պատմական իրավիճակի փոփոխությունները

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան 2022

Գրքույկի տպագրման ծախսերը հոգալու համար
իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում
Արմենուհի և Ղևոնդ Կուկունյանների անվան ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ հիմնադրամին,
«Գառնի ինվեստ» ունիվերսալ վարկային կազմակերպությանը (Երևան),
Դր Շահեն Զեյթունցյանին (Գորիս)

ՀՏԴ 008:93/94:91
ԳՄԴ 71+63.3+26.8
Գ 197

Գալչյան Ռուբեն
Գ 197 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ 2600 ՏԱՐՎԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: Աշխարհագրական, քարտեզագրական և պատմական իրավիճակի փոփոխությունները / Ռ. Գալչյան. — Եր.: «Զանգակ» հրատ., 2022. — 60 էջ:

Գրքույկի նպատակն է Հայաստանի սահմաններով հետաքրքրված հանրությանը և հատկապես ավագ դպրոցականներին պարզ և դյուրըմբռնելի լեզվով ու քարտեզների պատկերներով ծանոթացնել Հայաստանի սահմանների պարբերաբար փոփոխություններին և դրանց հիմնական պատճառներին: Հատորում ներկայացված է հատկապես օտարների կազմած կարևորագույն քարտեզների փոքր հավաքածու, որի մեծ մասը տեղ է գտել հեղինակի մյուս աշխատություններում: Գալով քսաներորդ դարի ընթացքում և դրանից հետո կազմված քարտեզներին՝ դրանք ցուցադրում են Հայաստանի անկախ հանրապետությունների սահմանները, որոնք հաճախ ապօրինի կերպով փոփոխվել են ի վնաս Հայաստանի:

ՀՏԴ 008:93/94:91
ԳՄԴ 71+63.3+26.8

ISBN 978–9939–68–

Նյութերի և քարտեզների հեղինակային իրավունքները պատկանում են Ռուբեն Գալչյանին: Որևէ կերպ կամ միջոցով գրքի նյութերից և պատկերներից օգտվելու, հանրային շրջանակներում տարածելու կամ վերատպելու համար պետք է ստանալ հեղինակի գրավոր համաձայնությունը:

© Գալչյան Ռուբեն, 2022
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2022

ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի՛ ընթերցող, պատմաբանի համար անաչառ է միայն սպիտակ թուղթը, որի վրա նա շարադրում է պատմության նկատմամբ իր մոտեցումներն ու դատողությունները։ Սակայն կա մի փաստաթուղթ՝ քարտեզը, որը լուռումունջ մեզ տանում է դարերի խորք, միջնադար և հասցնում մինչև իրարամերժ այսօր։

Այս գրքում Ռուբեն Գալչյանի ներկայացրած քարտեզները հեղինակն ինքը չի գծել և նկարազարդել։ Նա փութաջան հավաքել է դրանք աշխարհի տարբեր գրադարաններում, թանգարաններում, մասնավոր հավաքածուներում և ի սպաս է դրել իրենց հայրենիքի պատմությամբ հետաքրքրվողներին։ Քարտեզն ինքնին խոսուն է, եթե տվյալ ժամանակաշրջանի քո երկրի թշնամին ինքն իր ձեռքով է գծում Հայաստան–Armenia անունը քարտեզի վրա։ Դա նշանակում է՝ նա ուզղակի կամ անուղղակի ընդունում է այդ երկրի գոյությունը, այն, ինչ այսօր հերքում են մեր ոսոխները։

Քարտեզի իմացությունը հայրենիքի նկատմամբ սիրո առաջին գրավականներից է։ Հայրենիքը վերացական հասկացություն չէ, այն ունի աշխարհագրական դիրք, սահմաններ, տեղանուններ, որոնք էլ հաճախ դառնում են մեր հարևանների հետ վիճաբանության առարկա։ Նրանց նկատմամբ առավելություն ունենալու համար անպայման պետք է լավ իմանալ պատմությունը, աշխարհագրությունը, քարտեզը։

Հիշե՛ք, քարտեզն անխոնջ մարտիկ է, որը ձեզ նեցուկ կլինի ձեր գիտակցական կյանքի ամբողջ ընթացքում։

Աշոտ Մելքոնյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն,
ակադեմիկոս
Երևան, հուլիս 2022 թ.

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔԸ

Սույն գրքույկը գիտական աշխատանք չէ, այլ պարունակում է հանրամատչելի պատմաաշխարհագրական տեղեկություններ ու հիմնականում քարտեզներ, որոնց մեջ կարելի է տեսնել Հայաստանի գոյության և նրա սահմանների վերաբերյալ բոլորին հետաքրքրող հարցերից մի մասի հնարավոր պատասխանները։

Ավելի քան քառասուն տարի զբաղված լինելով քարտեզներով և հատկապես մեր տարածաշրջանի քարտեզներով՝ տարբեր աղբյուրներից ու երկրներից հավաքել ենք բազմաթիվ քարտեզներ ու քարտեզագրական տեղեկություններ, որոնց մի մասը տեղ է գտել մեր հեղինակած ութ աշխատությունների մեջ։ Սրանց թվում են նաև Ադրբեջանի, Թուրքիայի ու Հայաստանի միջև գոյություն ունեցող պատմական, աշխարհագրական և մշակութային խնդիրներն ու նրանց հակասությունները, որոնք նաև բացահայտում են հարևանների պատմության խեղաթյուրումներն ու այլ զեղծարարությունները։ Նաև հեղինակել ենք հոդվածներ ու տվել հարցազրույցներ տարբեր լրատվական հարթակներում՝ ռադիոյի և հեռատատեսության։

Գրքույկում նաև տեղ են գտել քարտեզներ ու շարադրանքներ իմ արխիվներից ու վերը նշված գրականությունից, որոնք ժամանակին հանգամանորեն քննարկվել են մեր տարբեր հրատարակություններում ու աշխատանքներում, սակայն այստեղ ներկայացված են ավելի պարզ և հանրամատչելի կերպով՝ առանց գիտական հղումների։ Ավելի գիտական մոտեցումների համար ընթերցողին խորհուրդ է տրվում դրանք գտնել մեր մյուս աշխատությունների մեջ։

Գրքույկը պարունակում է նաև համառոտ պատմական տեղեկություններ, իսկ քարտեզներին վերաբերող գլուխներում այստեղ նշված քարտեզներից յուրաքանչյուրը իրեն կից ունի հակիրճ, բայց կարևոր բացատրություններ տվյալ քարտեզի հեղինակի ու ցուցադրած տեղեկությունների կամ դրանց հետ կապված խնդիրների վերաբերյալ։

Գրքիս թիրախն են դպրոցական բարձր տարիքի աշակերտներն ու համալսարանական երիտասարդությունը, ինչպես նաև նրանք, ովքեր հետաքրքրված են Հայաստանի քարտեզներով ու սահմաններով։ Ցանկանում ենք նրանց փոխանցել որոշ կարևոր պատմական ու քարտեզագրական տեղեկություններ, որոնք հավաքել ենք վերջին 40 տարիների ընթացքում։ Այս տեղեկությունները համառոտ և հանրամատչելի կերպով հնարավոր չէ դյուրությամբ ձեռք բերել, քանի որ աղբյուրներից նման փաստարկներ ու նյութեր ձեռք բերելու համար կարիք է եղել հետազոտելու հսկայածավալ գրականություն, ինչպես նաև բազմաթիվ գիտական ու այլ աշխատություններ և արխիվներ։

Ռուբեն Գալչյան
Երևան, 2022 թ.

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Այս գրքույկում ներկայացնում ենք քարտեզներ, որոնք ներառում են Միջին Արևելքի և Կովկասի շրջանները, այսինքն՝ այն տարածքը որի մեջ է նաև Հայաստանը՝ լինի դա հնամենի, թե ներկայիս երկիրը։ Բայց նախ մի քանի փաստ ընդհանրապես քարտեզների մասին։

Քարտեզը մի փաստաթուղթ է, որը կարող է դիտողին ու ընթերցողին մեկ հայացքից հաղորդել բազմատեսակ և բազմաբնույթ տեղեկություններ, որոնք գրավոր ներկայացնելու համար հավանաբար կարիք կլինի մի քանի տասնյակ էջերում գրառել։ Իսկ քարտեզ դիտողը կարող է դրանից ստանալ իր ցանկացած նյութի մասին տեղեկություն՝ ըստ իր կարիքի և պահանջի, պայմանավորված քարտեզի տեսակով և դրա պարունակությամբ։

Ի վերջո, այսօրվա աշխարհը անկարելի է պատկերացնել առանց քարտեզների, որոնք ներկայում հավանաբար տպագրատեսակների մեջ ամենատարածվածն են, որոնց հետ, սակայն, այսօր մրցակցում են դրանց թվայնացված տարբերակները՝ լինեն դրանք առանձին նիշքեր, թե բջջային հեռախոսներում կամ պլանշետներում առկա ուղեցույցներ ու հասցեներ։

Գրքիս երկրորդ գլխում ներկայացնում ենք հիմնականում օտարների քարտեզներ, որոնց վրա կարելի է տեսնել՝ ինչպես են նրանք ընկալել և պատկերել Հայաստանն իրենց կազմած քարտեզներում՝ ներառելով նաև հարևաններին և դրանց գտնվելու շրջանը, իսկ 15-րդ դարից սկսած՝ հաճախ նաև երկրների սահմաններն ու տարածքները։

Այստեղ շեշտում ենք 15-րդ դարը, քանի որ դրանից առաջ ընդհանրապես քարտեզների վրա սահմաններ չէին գծվում, քանզի սահմանները շատ արագ փոփոխության էին ենթարկվում, և իրականության արձանագրման ու տեղեկության ավելի հաստատուն տարրը տեղաբնակ ժողովուրդն էր։ Այսպիսով՝ հաճախ բնիկ ժողովրդի անվանումը դրվում էր տվյալ տարածքի քարտեզի և շրջանի վրա, և տվյալ աշխարհագրական տարածքը բնիկ ժողովրդի անունով էր կոչվում։ Օրինակ՝ հայերով բնակեցված շրջանը կոչվում էր Հայաստան, պարսիկներով բնակեցվածը՝ Պարսկաստան, հույներովը՝ Հունաստան, արաբներովը՝ Արաբիա, և այդպես շարունակաբար։

* * *

Հայաստանից արևելք ունենք յուրահատուկ մի երկիր և իշխանություն, որը ծնունդ է առել 1918 թ.։ Նորածին երկիրը որպես հնագույն ազգ ու պետականություն ունեցող երկիր ներկայացնելու միտումով նրանց գիտնականներն ու իշխանավորներն իրենց հիմնադրման օրվանից անդադար խեղաթյուրում ու կեղծում են պատմությունն ու աշխարհագրությունը, որպեսզի գոնե այս զարտուղի միջոցներով հասնեն իրենց հնամենիությունը փաստելու նպատակին։ Մեր հանրության զգալի մասն անտեղյակ է այս պատմական մանրամասներից, հետևաբար մեր պարտքն ենք համարում հակիրճ պատմական տեղեկություն տալ այս հարևանի հեռավոր և մոտ անցյալի վերաբերյալ։

Ստրաբոնը, ով համարվում է աշխարհագրության հայրը, իր «Աշխարհագրություն» անվանված 17 հատորանոց գրքում 60 պարբերություն է հատկացնում հայերին և Մեծ ու Փոքր Հայքերին։ Նույն գրքում նա Հայաստանից արևելք՝ Կասպից ծովին կից երկիրը կոչում է Կովկասյան Ալբանիա (որը ոչ մի կապ չունի ներկա Ալբանիա երկրի հետ), որը հայերն անվանում են Աղվանք, իսկ պարսիկներն ու արաբները՝ Առան։ Ըստ Ստրաբոնի՝ այստեղ ապրում էին 26 ցեղեր, որոնցից ամեն մեկն ուներ

իր լեզուն։ Սա կարելի է ասել նաև ներկա Ադրբեջանի Հանրապետության համար, ուր ապրում էին լազեր, լեզգիներ, թալիշներ, ուդիներ, ինգիլոյներ, ցախուրներ, հայեր, թյուրքեր ու քուրդեր, իսկ ապագայում դրանց ավելացան նաև հրեաները, ռուսները և ուրիշներ։ Նրանցից ոչ մեկը, բացի ռուսներից, իրավունք չունի դասավանդելու և գործածելու իր մայրենի լեզուն ու պարտադրված է հաղորդակցվելու միայն ադրբեջանական թյուրքերենով։ Ծագումով նրանք բոլորը համարվում են ադրբեջանցի թյուրքեր, իսկ 1936 թվականից՝ ադրբեջանցիներ։

Այս ցեղերի մեծամասնությունը չորրորդ դարում դարձավ քրիստոնյա, ապա՝ 7–8–րդ դարերից սկսած, աստիճանաբար ընդունեցին իսլամը, և միայն չնչին քանակով ուդիներն են, որ այսօր մնացել են քրիստոնյա։ Տարածաշրջանը մինչև 10–12–րդ դդ. կոչվում էր Աղվանք, իսկ միջին դարերում տեղում իշխում էին իսլամական խաներն ու ցեղապետերը, սակայն 16–ից 19–րդ դարերում Արցախ–Ղարաբաղի բնիկ հայ բնակչությանը ղեկավարում էին տեղում հաստատված հինգ հայ մելիքները, ովքեր ապրում և իշխում էին ինքնավար։ 18–20–րդ դդ. այս ընդհանուր տարածաշրջանն օտարներին հանրածանոթ էր «Շիրվան» անվանումով։

«Ադրբեջան» անունն Արաքսից հյուսիս ընկած տարածքից ընդհանրապես բացակայում է՝ սկսած անտիկ աշխարհից ընդհուպ մինչև 1918 թ., երբ այստեղ ստեղծվեց հիմնականում թյուրքալեզու և մուսուլման բնակչություն ունեցող մի նոր հանրապետություն։ Ազգայնամոլ կուսակցության ղեկավար Ամին Ռասուլզադեն, խորհրդակցելով Օսմանյան կայսրության ծայրահեղականների հետ, որոշեց նորաստեղծ երկրի անունը դնել «Ադրբեջան», որը հարևան երկրի, Պարսկաստան/Իրանի հյուսիսարևմտյան նահանգի հնագույն անվանումն էր։ Այս թյուրանվանման մասին Իրանը ժամանակին բողոքեց, սակայն մեծ երկրները, զբաղված լինելով Միջին Արևելքի նավթային պաշարների բաժանման քաշքշուկով, այս բողոքին ուշադրություն չդարձրին։

Նախքան մեր թվարկությունն Իրանի Ադրբեջան նահանգի հնագույն անվանումը «Փոքր Մարաստան» էր, որն, ի պատիվ իր հայրենասեր Զորավար Ատրոպատի, անվանվեց «Ատրոպատեն»։ Մենք՝ հայերս, դեռևս պահպանել ենք դրա հնամենի անունը և ներկայումս այդ նահանգը կոչում ենք «Ատրպատական»։ Սակայն պարսկերենում ընդհանրացած «Ատրոպատեն» անունը արաբների արշավանքից հետո աստիճանաբար տրոհվել է ու դարձել Ամորբաթկան, Ադերբայգան, Ադերբիգան, Ադերբիջան ու Ադերբայջան։

1918 թ. Ադրբեջանի կայացումից մինչև 1936 թ. տեղաբնակներն իրենց անվանում էին թուրք կամ մուսուլման, իսկ ռուսները նրանց պաշտոնապես կոչում էին թյուրքեր կամ թաթարներ։ Միայն 1936 թ. ԽՍՀՄ կենտրոնական ղեկավարության որոշմամբ էր, որ երկրի բնակիչներն անվանափոխվեցին ու դարձան ադրբեջանցի կամ ադերի։

Այսօր, երբ Ադրբեջանի Հանրապետությունը բանակցում և ներկայանում է եվրոպական ու արևմտյան երկրներին, քրիստոնյա աղվաններին ներկայացնում է որպես իրենց նախնիներ, որոնք կառուցել են Ադրբեջանում և նույնիսկ Հայաստանում գտնվող բոլոր վանքերն ու եկեղեցիները։

Այս հայտարարությունը մոռացության է տալիս այն հանգամանքը, որ աղվանական ցեղերից շատերը 9–ից 16–րդ դարերում արդեն իսկ ընդունել էին իսլամը, և հատկապես 16–19–րդ դդ. իսլամական իշխանություն ունեցող շրջանում քրիստոնյա փոքրամասնությունները նույնիսկ իրավունք չունեին կառուցելու նման քրիստոնեական բազմաթիվ վանքեր, եկեղեցիներ և այլ հոգևոր կոթողներ։

Իսկ եթե նույնիսկ ընդունենք, որ Ադրբեջանում գտնվող վանքերը, եկեղեցիները և այլ կոթողները աղվանական են, ապա Ադրբեջանն ինչո՞ւ է ոչնչացնում իրենց մշակույթը ներկայացնող այս պատմա-

կան ժառանգությունը։ Հայկական հուշարձանների ավերումները կատարվել են սկսած խորհրդային ժամանակներից և շարունակվում են ցայսօր։ 2005 թ. ադրբեջանական զինուժը ոչնչացրեց Ջուղայի 5000, իրենց ասելով, «աղվանական խաչքարերը»։ Վերջերս էլ Արցախում հիմնահատակ ավերեցին Մեխակավանի եկեղեցին և այլ եկեղեցիներ ու խաչքարեր։ Ինչո՞ւ է իշխանությունը կազմակերպված ձևով ոչնչացնում, այսպես կոչված, «իրենց իսկ մշակույթի մաս հանդիսացող» քրիստոնեական կոթողներն ու հուշարձանները։ Արդյոք դրանց ավերման պատճառը հայկական, հետևաբար օտարինը լինելու իրականությունը չէ։

Վերադառնալով նրանց նախնիներին. ադրբեջանցիների՝ աղվանական ծագում ունենալը Ալիևի իշխանության ընդունած իրենց ծագման առաջին տարբերակն է։ Երկրորդն այն է, ինչը նրանք հայտարարում են, երբ բանակցում են «եղբայրական» Թուրքիայի հետ։ Այս անգամ նախահայրերի վերաբերյալ նրանց կարգախոսն այն է, որ «ադրբեջանցիներն ու թուրքերը իրականում նույն ժողովուրդն են՝ բաժանված երկու երկրների միջև», նույնիսկ այն, որ իրենց Ադրբեջան երկիրը 19–րդ դարում երկու՝ «հարավային» և «հյուսիսային» մասերի են բաժանել պարսկական և ռուսական կայսրությունները։ Այսպիսով՝ նրանք նաև ցանկանում են տեր դառնալ Իրանի Ատրպատական–Ադրբեջան նահանգին։ Այս նույն կարգախոսով են հանդես գալիս նաև Թուրքիայի իշխանությունները՝ պնդելով, որ թուրքերը և ադրբեջանցիներն ունեն նույն նախահայրերը՝ օղուզ թուրքերը, որը պաշտոնապես հայտարարվեց 2022 թ. Շուշիում կազմակերպված իսլամական համագումարում։ Իսկ Թուրքիայի հետ բանակցելիս ադրբեջանցիների աղվանական ծագման մասին խոսք անգամ չի լինում։

Այս ընթացիկ խնդիրը վերջնականորեն որոշելու համար 1990–ականներին Հեյդար Ալիևը Բաքվում գիտնականների ու պատմաբանների հանդիպում էր կազմակերպել, որի նյութն էր «Ովքե՞ր ենք մենք, և ովքե՞ր են մեր նախնիները՝ աղվաննե՞րը, թե՞ թյուրքերը»։ Երկու ժամ տևած այս հանդիպման վերջում որևէ եզրակացության չեկան, և խնդիրը մնաց առկախ։ Դրա անուղղակի արդյունքն այն եղավ, որ այսօր Ադրբեջանում ծագումնաբանական ԴՆԹ հետազոտություն կատարելն ընդհանրապես արգելված է։

* * *

Վերադառնալով Հայաստանի պատմությանը. հնագույն ժամանակներում «Հայաստան» անունը հիշատակվում է մ.թ.ա. 6–րդ դ. պարսից Դարեհ Մեծ արքայի սեպագիր արձանագրության և բաբելոնյան կավե սալիկի վրա (տե՛ս քարտեզ 2.3 և 2.4), ապա՝ Հերոդոտոսի «Պատմություն» աշխատության մեջ (տե՛ս Պատ. 2.5)։ Դրանից հետո միջազգային պատմության մեջ բազմաթիվ հիշատակումներ կան հայոց արքա Տիգրան Մեծի ընդլայնած Հայաստանի մասին, որը տարածված էր ծովից ծով (տե՛ս Պատ. 2.6), իսկ դրանից հետո Մեծ և Փոքր Հայքերի մասին է գրել և պատկերել հույն աշխարհագրագետ Պտղոմեոսը իր 2–րդ դարի աշխատության մեջ, որտեղ նա աշխարհի շուրջ 8000 տեղանուններից 164–ը հատկացրել է Հայաստանին (տե՛ս Պատ. 2.7 և 2.8)։

301 թ. քրիստոնեությունն ընդունելուց հետո մեր և հարևանների հարաբերությունները դարձան խնդրո առարկա։ Պարսիկներն աշխատում էին հայերին հետ բերել դեպի արևապաշտական կրոնը, որը համընկնում էր նրանց զրադաշտականին։ Այդ իսկ պատճառով էր, որ 449–451 թթ. նրանք, գրավելով Հայաստանը, փորձեցին քրիստոնյա Հայաստանին պարտադրել հրաժարվել իրենց նոր կրոնից, սակայն, հանդիպելով անվերապահ դիմադրության, Ավարայրի ճակատամարտում հաղթանակ տանելով հանդերձ, պարսից արքա Հազկերտ 2–րդը որոշեց այլևս բռնությունը չշարունակել, և այդ օրերից Հայաստանը Իրանի համար ընդունելի դարձավ որպես քրիստոնյա հարևան երկիր (տե՛ս Պատ. 2.9 և 2.10)։

6–7 դարերում Հայաստանը ակամա դարձավ բյուզանդական և պարսկական կայսրությունների ռազմադաշտը (տե՛ս Պատ. 2.14 և 2.15), որին հաջորդեցին մուսուլման արաբների ասպատակումներն ու ջարդերն այս անգամ նրանց նոր՝ իսլամական կրոնի տարածման նպատակով։ Հաջորդ և ծայրահեղ ավերիչ նվաճողներն էին թյուրքական ցեղախմբերը, մոնղոլները և Լենկթեմուրը, որոնք անցան Հայաստանով՝ ավերելով այն ամենը, ինչ կարողացան։ Այսպիսին են եղել և այսօր էլ այդպիսին են հանուն կրոնի կատարված ու կատարվող պատերազմները, մարդասպանությունները և ցեղասպանությունները աշխարհով մեկ։

11–րդ դարից հետո ռազմադաշտերից ճողոպրած հայերի մի մասը, իր դարավոր հայրենիքը թողնելով, անցավ հյուսիս–արևմուտք՝ հասնելով Ուկրաինա, Ռումինիա, Լեհաստան և այլուր, այդ երկրներում հաստատվելով ու հիմնելով հայկական օջախներ, համայնքներ ու գաղութներ։ Մյուս մասն էլ քոչեց հարավ՝ հաստատվելով Միջերկրական ծովի հյուսիսարևելյան անկյունում՝ սկզբում տեղում հիմնելով իշխանություն, ապա՝ 12–րդ դարից սկսած, Կիլիկիո հայկական թագավորությունը իր Սիս մայրաքաղաքով և կաթողիկոսի նստավայրով, որը հարատևեց մինչև 1375 թ. (տե՛ս Պատ. 2.11 և 2.12)։

Պետք է նշել, որ Կիլիկիայի իշխանություններն ու առևտրականները սերտ կապեր ունեին Վենետիկի, Ջենովայի, Կատալոնիայի և նույնիսկ հոլանդական առևտրական կենտրոնների և առևտրականների հետ, որոնք շարունակվեցին մինչև 17–18–րդ դդ։ Միջին դարերում «Հայաստան» անունը մշտապես ներկայացվում էր եվրոպական ու իսլամական քարտեզներում, նույնիսկ երբ նման անկախ պետություն գոյություն չուներ։ Անվանման պատճառն այն էր, որ տվյալ տարածքում ապրում էին հայեր, հետևաբար տարածքն անվանում էին «Հայաստան» (տե՛ս Պատ. 2.13–ից մինչև 2.17)։ Միջին դարերում սա մի ընդհանուր անվանակոչման ձևաչափ էր, ուր սահմանների անորոշության և հաճախակի փոփոխվելու պատճառով, ինչպես նախապես նշվեց, աշխարհագրական շրջանները կոչվում էին ըստ տեղի բնակիչների անվանումների։

16–19–րդ դարերում մեր արևելյան և արևմտյան հարևան կայսրությունները երկուսն էլ մուսուլմանական էին, բայց պատկանում էին կրոնի տարբեր ուղղությունների։ Օսմանները սունի էին, պարսիկները՝ շիա, իսկ Հայաստանը այդ երկու հզոր կայսրությունների միջև էր։ Այս երկուսը հաճախ իրար դեմ թշնամաբար էին տրամադրված և պարբերաբար պատերազմում էին, իսկ նրանց ռազմադաշտը կրկին հայերով բնակված տարածքներն էին, որոնք հերթականորեն գրավվում էին մեկի կամ մյուսի կողմից։ Նրանք ոտնատակ էին տալիս բնիկներին ու նրանց ունեցվածքը, այսինքն՝ հայկական բնակավայրերը, հանդերն ու արտերը (տե՛ս Պատ. 2.18 և 2.19)։

19–րդ դարասկզբին Հարավային Կովկասը գրավել էին Օսմանյան և Իրանի կայսրությունները, սակայն ցարական Ռուսաստանը նույնպես սկսել էր հետաքրքրվել Անդրկովկասյան տարածքներով։ 1813 և 1828 թթ. պատերազմներով Ռուսաստանը գրավեց Անդրկովկասը՝ տեղանքը բաժանելով իրեն նպատակահարմար վարչական մասերի, որոնց տարածքներն ու անվանումները հաճախ փոխվում էին՝ ըստ փոխարքայի քմահաճույքի, առանց ուշադրություն դարձնելու դրանց ժողովրդագրական ու ազգագրական հիմունքներին (տե՛ս Պատ. 2.20 և 2.21)։

Սահմանների և իշխողների այս բոլոր փոփոխությունների ընթացքում միայն մեկ բան էր հաստատուն՝ Արաքսից հյուսիս Ադրբեջան անունով երկիր չկար, իսկ Ադրբեջան անվանումը Արաքսի հարավային ափին գտնվող Իրանի հյուսիսարևմտյան հնագույն նահանգինն էր (տե՛ս Պատ. 25), որը հայերը կոչում են իր հնամենի անունով՝ Ատրպատական։

Ներկա Իրանի հյուսիսարևմտյան նահանգի անունը հնում Փոքր Մարաստան էր, որն անվանափոխվեց Ատրպատենի, որը տրոհվելով դարձավ Ադրբեջան։ Իսկ Արաքսի հյուսիսային ափին 1918 թ. ծնվեց Ադրբեջանի Հանրապետությունը։

* * *

Գրքույկի երրորդ գլխում խորքային անդրադարձ է արվում 20–դարի Հայաստանի հանրապետությունների զբաղեցրած տարածքներին ու սահմաններին։

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին, որի ընթացքում Օսմանյան կայսրությունը իրականացրեց Հայոց ցեղասպանությունը, Կովկասի հարավում ստեղծվեցին երեք անկախ հանրապետություններ։ Սրանցից Հայաստանն ու Վրաստանը վերականգնեցին իրենց հնամենի անվանումները, իսկ երրորդը՝ նորաստեղծ մուսուլմանական երկիրը, ինչպես նախապես նշվեց, հարևան Իրանի նահանգի անունը յուրացնելով, անվանվեց Ադրբեջան։ Օսմանյան կայսրության և հարակից տարածքների ապագա տեսլականի և խաղաղության համար Փարիզի արվարձան Սևրի պալատում կայացած հաղթող երկրների ներկայացուցիչների համագումարը 1920 թ. ԱՄՆ–ի նախագահ Վուդրո Վիլսոնին լիազորեց որոշելու դաշնագրով վավերացրած Հայաստանի սահմանները, որոնք գծվեցին ու ստորագրվեցին, սակայն տարբեր պատճառներով չիրականացվեցին, իսկ նորաստեղծ երեք երկրների միջև հավելյալ որևէ սահմանագծում ու սահմանազատում տեղի չունեցավ, որի արդյունքն է ներկայիս անհասկանալի, վիճարկելի ու անընդունելի դրությունը (տե՛ս Պատ. 3.1 և 3.2)։

Երբ Հայաստանը խորհրդայնացավ, նրա սահմանների մեջ մտնում էր 43,000 քառ. կմ տարածք, որից, սակայն, խորհրդայնացումից հետո Ադրբեջանին տրվեցին Նախիջևանը, Լեռնային Ղարաբաղը և Արևելյան Սյունիքը, իսկ Թուրքիային՝ Կարսը, Սուրմալուն ու Արարատները։ Պետք է նշել, որ ժամանակին Լեռնային Ղարաբաղ կոչված տարածքը ներառում էր ներկայիս Արցախը, ինչպես նաև Քաշաթաղը և Քարվաճառը, որոնք միասնաբար ճանաչված էին որպես մեկ երկրամաս (տե՛ս Պատ. 3.3 և 3.4)։ Այս տարածքները Թուրքիային և Ադրբեջանին հանձնելուց հետո Խորհրդային Հայաստանի Հանրապետության տարածքը դարձավ շուրջ 31,000 քառ. կմ (տե՛ս Պատ. 3.5)։

Հաջորդող տարիների ընթացքում Հայաստանում հիմնվեց երեք ադրբեջանական անկլավ, որոնց հիմնական և պաշտոնական նպատակը ակնհայտ է՝ ռազմավարական հատուկ նշանակություն ունեցող վայրերում Հայաստանի մայրուղիների վերահսկողությունը Ադրբեջանին տալը (տե՛ս Պատ. 3.6–3.10, 3.12 և 3.14)։

1923 թ. Ադրբեջանի նորաստեղծ հանրապետությունը հայտարարեց, որ իր և Հայաստանի միջև հիմնադրելու է Կարմիր Քրդստան գավառը, ուր պետք է բնակվեին խաշնարած քրդերը, որոնց համար կարիք կար ապահովելու բավարար արոտավայրեր։ Հիմնականում հենց այս նպատակով Հայաստանից ավելի քան 1500 քառ. կմ դաշտ ու արոտավայր տրվեցին Ադրբեջանին, որպեսզի քրդերն ունենան բավարար արոտավայրեր, բայց երբ Կարմիր Քրդստան գավառի ստեղծումը չեղարկվեց, նշված նպատակով Հայաստանից վերցված տարածքները չվերադարձվեցին իրենց օրինական տիրոջը՝ Հայաստանին, այլ մնացին Ադրբեջանի տարածքում (տե՛ս Պատ. 3.10 և 3.11)։

1920 թ. առաջին կեսին Տավուշում Ադրբեջանի սահմանն անցնում էր գետի երկայնքով, որը դրանից հետո փոխվեց, և Հայաստանից երկու սեպաձև հայկական հողակտորներ, որոնցով անցնում էր Հայաստանի մայրուղին, տրվեցին Ադրբեջանին։ Սա կարող էր լինել միայն մեկ միտումով՝ որ հայկական մայրուղին մի քանի տեղ պարտադիր անցնի Ադրբեջանի տարածքով (տե՛ս Պատ. 3.13) և լինի նրանց հսկողության ներքո։ Այս նույն դիրքն ունի Գորիսից Կապան տանող մայրուղին, որը մի

քանի անգամ հատում է Ադրբեջանի սահմանը, որի ընդհանուր երկարությունը ավելի քան քսան կիլոմետր է (տե՛ս Պատ. 3.14)։ Հողամասերը Հայաստանից վերցվել և Ադրբեջանին էին տրվել 30-ականներին, սակայն Կապանի մայրուղին կառուցվել էր 1953-1956 թթ., և անհասկանալի է, թե ինչո՞ւ է Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը համաձայնել կառուցելու մի ճանապարհ, որի զգալի մասն անցնում է հարևանի տարածքով՝ առիթ տալով ապագա անհաղթահարելի դժվարությունների։

Գորիս-Կապան ճանապարհի պարագայում խորհրդային զինվորական գլխավոր շտաբի մանրակրկիտ քարտեզները, որոնք հրատարակվել են մինչև 1970-ականները, պարզ ցույց են տալիս, որ ճանապարհը մի քանի տեղ հատում է Հայաստան-Ադրբեջանի սահմանը (տե՛ս Պատ. 3.14), մինչդեռ հանրության համար մինչև վերջերս հրատարակված քարտեզներում ցուցադրված է, թե իբր ճանապարհն ամբողջովին Հայաստանի տարածքում է (տե՛ս Պատ. 3.15)։ Սա էլ մեկ այլ պետական խաբեություն է, որի աղբյուրը պետք է փնտրել 1928-1940 թթ. պետական և պաշտոնական որոշումների մեջ։

Ներածականի վերոնշյալ բացատրությունները հակիրճ են և նշում են միայն քարտեզի ընդհանուր պարունակությունը։ Հաջորդ գլուխներում ամեն քարտեզի համար ավելի մանրամասն բացատրությունները տրված են առանձին, տվյալ քարտեզին հատկացված էջում։

Ահա ինչ ենք ժառանգել Խորհրդային Միությունից և Խորհրդային Սոցիալիստական Հայաստանի Հանրապետությունից։ Սահմաններ, որոնք կարիք ունեն նոր քարտեզագծման ու քարտեզազատման, որը պետք է կատարվի միջազգային իրավաբանական մասնագետների լուծումներով և չեզոք մասնագետների հսկողության ներքո։ Քարտեզագծման ու քարտեզազատման նպատակը պետք է լինի հնարավորինս չեղարկել սխալ, պարտադրված և մարդկային իրավունքները ոտնահարող որոշումները։ Նպատակը մեկն է՝ քարտեզագծման հիմքում պետք է լինեն 1921-1923 թթ. խորհրդային գլխավոր շտաբի կազմած այն քարտեզները, որոնց վրա էլ հիմնված է Մոսկվայում հրատարակած Հայաստանի քարտեզը՝ զետեղված Խորհրդային առաջին մեծ հանրագիտարանում՝ «Հայաստանի սահմանները 1926 թ. ապրիլի 1-ին»։ Իսկ դրա համար աղբյուր հանդիսացող քարտեզների օրինակները, որոնք մեր երկրի սահմանների քարտեզներն են, անհայտ պատճառներով մինչ այսօր մեզ չեն տրամադրվել։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ ՏԱՐԲԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Մարդկության պատմության տարբեր դարաշրջաններում քարտեզները հաճախ պատկերվում էին բոլորովին այլ կերպերով, որոնցից շատերը քարտեզի մեր պատկերացումներին չեն համապատասխանում: Դրա համար էլ այստեղ, որպես օրինակ, ցուցադրում ենք մի քանի տեսակի քարտեզներ:

Այս չորս պատկերները նպատակ ունեն ցուցադրելու տարբեր դարերում կազմված, ամբողջ աշխարհը ցույց տվող, այսպես կոչված, «Աշխարհացույց» քարտեզներ, որոնք կարող են իրարից շատ տարբեր լինել: Ակնառու է, որ միջնադարում ու հին դարերում դրանց ցույց տալու ձևն ու դրվածքը չէին համընկնում ներկայում մեր պատկերացրած քարտեզներին: Ներքևում ներկայացված են սրանցից մի քանի օրինակներ:

Պատ. 1.1. Սա մի արդի «Աշխարհացույց» քարտեզ է, որին ծանոթ են համարյա բոլորը:
Քարտեզի վրա հյուսիսը էջի վերևում է:

Պատ. 1.2. 16–րդ դարի «Աշխարհացույց» քարտեզ, որտեղ Ալյասկայի տարածքը գծված է անավարտ: Ավստրալիան ընդհանրապես գոյություն չունի, իսկ Անտարկտիդան գրավում է երկրագնդի ամբողջ հարավը: Քարտեզի շուրջբոլորը դիցաբանական պատկերներ են:

Պատ. 1.3. Քարտեզի հիմքում քրիստոնեական դոգմաներն են, 10–րդ դար:
Քարտեզն ունի իտալական քարտեզագրական ոճ. Արևելքը քարտեզի վերևում է:



Պատ. 1.4. Այս քարտեզը միջնադարյան հայկական աշխարհացույց է, որի վրա նույնպես Արևելքը քարտեզի վերևում է:
Աշխարհի կենտրոնում Երուսաղեմն է իր վեց դարպասներով, իսկ դրանից աջ՝ հարավ, տեսանելի է Կարմիր ծովը՝ ներկված կարմիրով:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՕՏԱՐՆԵՐԻ 2600 ՏԱՐՎԱ ՔԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ

Պատ. 2.1. Բեհիսթունյան արձանագրությունները

Պատ. 2.2. Արքայից արքա Դարեհի Բեհիսթունից մեկ հատված

Հայաստանի անունը հայտնվել է բազմաթիվ հնագարյան պատմական տեքստերում: Պարսից արքայից արքա Դարեհ Մեծը «Հայաստան» անունը արձանագրել է իր հանրահայտ Բեհիսթունյան սեպագիր արձանագրության վերը ցուցադրված տեքստում:

Այս եռալեզու արձանագրության մեջ նշված է, որ նա իր հայ զորավար Դադարշիշին ուղարկել էր հարևան Հայաստան (խոսքը մ.թ.ա. 521 թ. մասին է)՝ վերահաստ լինելու այնտեղի դեպքերին: Նույն տեքստում Հայաստանի անունը էլամերեն նշված է որպես «Հարմինույա», հին պարսկերենով՝ «Արմինիյա», իսկ Բաբելոնյան սեպագրով՝ «Ուրարտու»: Սրանք երեքն էլ նույն երկրին տրված անվանումներն են: Նույն երկրին տարբեր անուններ տալու այլ օրինակն է Գերմանիան, որը իրենք՝ գերմանացիները կոչում են «Դոյչլանդ»:

Պատ. 2.4. Աշխարհացույց՝ բաբելոնյան կավե սալիկ, Բրիտանական թանգարան, Լոնդոն:
Վերը ցուցադրված է սեպագիր գրվածքի՝ գերմանացի մասնագետի կատարած թարգմանությունը:

Պատ. 2.3 Ներկայում հնագույն և ամենակարևոր աշխարհացույց քարտեզը մի փոքրիկ բաբելոնյան կավե սալիկ է՝ 8x12.5 սմ չափերով, որը Լոնդոնի Բրիտանական թանգարանում է և համարյա ժամանակակից է Դարեհ Մեծի արձանագրությանը:

Այստեղ բուն աշխարհը ցույց է տրված որպես մի շրջանաձև սկավառակ, որի վերևում՝ հյուսիսում, այն լեռներն են, այսինքն՝ Հայկական բարձրավանդակը կամ լեռնաշխարհը, որտեղից սկիզբ է առնում և դեպի հարավ հոսում Եփրատ գետը: Մեջտեղում է աշխարհի կենտրոն Բաբելոնը, որից հյուսիս–արևելք է Ասորեստանը, իսկ դրանից հյուսիս է Ուրարտու–Հայաստանը, ինչպես նաև մի քանի ուրիշ անանուն քաղաքներ:

Ըստ գերմանացի սեպագիր վերծանողի՝ սալիկի վրա նշված աշխարհի կենտրոնում գտնվող երեք երկրներն են Ասորեստանը, Բաբելոնը և Հայաստանը: Այս սալիկը Հայաստանի գոյության հնագույն վկայարաններից է:



Պատ. 2.5. Հերոդոտոսի «Աշխարհացույց» քարտեզը

Հին հունահռոմեական շրջանից մեզ հասած գրավոր փաստաթղթերն ընդհանրապես սահմաններ չեն նշում, և տարածքներն անվանվում են այնտեղ ապրող ժողովուրդների անուններով։ Այդպես շարունակվեց ավելի քան մեկուկես հազարամյակ՝ մինչև տպագիր քարտեզների երևալը։ Նույնիսկ մինչև 15-րդ դ. տպագիր քարտեզների մեծամասնության վրա սահմաններ չէին նշվում։

Իր «Պատմություն» հատորում պատմահայր Հերոդոտոսը Հայաստանի մասին գրում է ութ տարբեր տեղերում։ Եվրոպացի բազմաթիվ քարտեզագիրներ և մասնագետներ կազմել են աշխարհացույց քարտեզներ՝ գծված ըստ Հերոդոտոսի շարադրանքի, որոնք նմանակում են միմյանց։

Այս քարտեզում, որը 1884 թ. վերականգնել է Կարլ Մյուլլերը, Հայաստանը, որն ընդգծված է կարմիրով, քարտեզի կենտրոնում է՝ Սև և Կասպից ծովերից հարավ գտնվող տարածքում՝ շրջապատված Մարաստանով, Ասորեստանով և Կապադովկիայով։

Պատ. 2.6. Տիգրան Մեծի Հայաստանն ըստ Սմիթի ատլասի, Լոնդոն, 1875 թ.

Նախքան մեր թվարկումը՝ առաջին դարում, Հայաստանն ուներ հզոր արքա՝ Տիգրան Երկրորդը կամ Տիգրան Մեծը (140–55 թթ. մ.թ.ա.), ով ստեղծեց հսկայական հայկական թագավորություն՝ տարածված Կասպից ծովից մինչև Միջերկրականի արևելյան ափերը՝ Սիրիան և Պաղեստինը: Պատ. 2.6–ի վրա Տիգրանի թագավորությունը նշված է դեղինով: Տիգրան Մեծի Հայաստանը ժամանակի երկրներից ներառում էր Մեդիան, Կադուսիան, Կապադովկիան, Սիրիան, Կոմագենեն, Ադիաբենեն, Միլետենեն, Կիլիկիան և այլ երկրներ, որոնցից ոչ մեկն այսօր գոյություն չունի: Այստեղ Ադրբեջան անունն ընդհանրապես չի նշվում:

Տիգրանի հզոր պետությունը Հռոմին ընդունելի չէր, և Հռոմի կայսրությունն, իր դաշնակիցների հետ միանալով, Տիգրանին պարտության մատնեց և նրա կայսրությունը սահմանափակեց միայն Մեծ Հայքի տարածքով, որը տարածվում էր Եփրատից մինչև Կուր գետը:

Պատ. 2.7. Հատված Պտղոմեոսի աշխարհացույցից՝ վերագծված 1513 թ. Ստրասբուրգում:

Ալեքսանդրիացի Կլավդիոս Պտղոմեոսը (մոտ 98–168 թթ.) ամենաճանաչված հույն աշխարհագրագետն էր և ճանաչված է որպես քարտեզագրության հիմնադիր: Նա իր քարտեզագրության հիմք հանդիսացող «Գեոգրաֆիա» աշխատության մեջ առաջադրել էր տեղանք չափագրելու և գծագրելու հիմունքներ ու մեթոդներ, որոնք գործածվում էին մինչև 16–րդ դարը:

Գրքի հատորներում առկա է աշխարհի շուրջ 8000 տեղանուններ պարունակող ցանկ, որտեղ ամեն մի երկրի տեղանուն ցուցակագրված է երկրին վերաբերող գլխում: Ընդհանուր տեղանուններից 164–ը պատկանում են Մեծ և Փոքր Հայքերին: Քարտեզների շարքում են մեկ աշխարհացույց և 27 երկրամասերի քարտեզներ՝ նվիրված Ասիայում, Աֆրիկայում և Եվրոպայում գոյություն ունեցող երկրներին:

Այս պատկերը հատված է նրա «Աշխարհացույց» քարտեզից, որը Կասպից ու Սև ծովերից հարավ և արևմուտք ընկած տարածքում նշում է Մեծ Հայքը և Փոքր Հայքը, որոնք ընդգծված են կարմիրով: Մարաստանը, որը ներկայում Իրանի Ատրպատական նահանգն է, ընդգծված է կանաչով: Կապույտով ընդգծված է Կովկասյան Աղվանքը, որը ներկայում Ադրբեջանի Հանրապետության գրաված տարածքն է:

Պատ. 2.8. Պտղոմեոսի «Գեոգրաֆիա» աշխատությունից վերցված Մեծ և Փոքր Հայքերի քարտեզը՝ վերագծված 1482 թ. Հռոմում:

Սա Պտղոմեոսի Մեծ և Փոքր Հայքերի քարտեզն է, որտեղ դրանք նշված են սպիտակով՝ Armenia Maior և Armenia Minor: Դրանց շրջապատում են արևելքից՝ Կասպից ծովը և Մարաստանը, հյուսիսից՝ Կապադովկիան, Կողքիս–Աբխազիան, Վիրքը և Ալբանիա–Աղվանքը: Արևմուտքում Պաֆլագոնիան և Գալաթեան են, իսկ հարավում՝ Կիլիկիան, Ասորեստանը և Սիրիան:

«Գեոգրաֆիա» հատորի բոլոր օրինակներում առկա են Մեծ Հայքն ու Փոքր Հայքն իրենց հարևան երկրների հետ միասին, իսկ Ադրբեջան անվանումն այստեղից ընդհանրապես բացակայում է:

Պատ. 2.9. Բեատուսի աշխարհացույցը նրա «Ապոկալիպսին» աշխատությունից, 8–րդ դար

Այս քրիստոնեական T–O տեսակի աշխարհացույցը վերևում նշում է Արևելքը՝ Երկրային դրախտով, ուր կանգնած են Ադամը, Եվան և օձը: «Հայաստան» անունը ընդգծված է բաց կանաչով, բայց կիսով չափ ջնջված է դրախտից ձախ՝ Կովկասյան լեռների մոտ:

Այստեղ նշված երկրներից ու քաղաքներից են Կապադովկիան, Պամֆիլիան, Փոյուգիան, Քաղկեդոնը և այլն: Աշխարհը բաժանված է երեք մասի: Ուղղահայաց կապույտ լայն գիծը Միջերկրական ծովն է իր կղզիներով, որը Եվրոպան բաժանում է Աֆրիկայից, ձախ կողմի հորիզոնական կապույտ տարածքը Դոն գետն է՝ Ասիայի և Եվրոպայի սահմանը, իսկ աջի կապույտը Նեղոսն է՝ Ասիայի և Աֆրիկայի սահմանը: Քարտեզի աջում ուղղահայաց կարմիր գծով առանձնացրած փոքր մասը նշում է աշխարհի տափարակ սկավառակի հարավային՝ անմարդաբնակ տարածքը:

Նման քարտեզները կոչվում են T–O տեսակի աշխարհացույց քարտեզներ, քանի որ աշխարհը տեղադրված է O տառի շրջանակի մեջ, և T տառն էլ, տեղադրված լինելով O տառի մեջ, աշխարհը բաժանում է երեք մայրցամաքների՝ Ասիա, Եվրոպա և Աֆրիկա: Իսկ երկու տառերը նշում են լատիներեն Orbis Terrarum, այսինքն՝ Երկրա–Գոնդ, ուր առաջին երկու տառերն են O և T:



Պատ. 2.10. 10–րդ դարի իսլամական այս քարտեզը ցուցադրում է Կովկասից հարավ ընկած տարածքը:

Իսլամական այս քարտեզը Բալխի դպրոցինն է, որտեղ սովորաբար կազմվել են միայն մուսուլմանական երկրների քարտեզներ: Կովկասից հարավ ընկած քրիստոնյա երկրներից միմիայն Հայաստանն է նշված այս քարտեզներում, քանի որ, նրանց ասելով, հայերը սերտ առևտրական և քաղաքական կապեր ունեին Իրանի Ատրպատական նահանգի, Աղվանքի և այլ իսլամական երկրների հետ:

Քարտեզի վրայի կանաչ կիսակլորները նշում են լեռնաշղթաները, իսկ կապույտը՝ գետերը: Կասպից ծովը ներկված է կանաչ: Ձախ կողմում երկու կարմիր լեռները Արարատներն են, իսկ մյուսը՝ Ատրպատականի Սաբալան լեռն է: Փոքր քառանկյունիները նշում են քաղաքները՝ իրար միացած ճանապարհներով: Կապույտ գետերից վերևինը Կուրն է, իսկ ներքևինը՝ Արաքսը:

Առան–Աղվանքը Կուրի ու Արաքսի միջև է, իսկ Արմանիյե–Հայաստանը՝ Արաքսի վրա և դրա հարավ–արևմուտքում: Իրանի Ատրպատական նահանգը Արաքսից հարավ նշված է գլխատառերով:

Բոլոր իսլամական քարտեզներում Առանը և Ադրբեջանը ցույց են տրված որպես երկու տարբեր երկրներ, իսկ Ադրբեջանն այսօր պնդում է, թե դրանք մեկ երկիր են: Իսլամական քարտեզագրության մեջ Արաքսից հյուսիս Ադրբեջան անունով երկրամաս ընդհանրապես գոյություն չունի:



Պատ. 2.11. Կիլիկիայի հայկական թագավորությունը

Թուրքական ցեղերի ձեռքով Անիի կործանումից և հայկական այլ բնակավայրերի գրավումից հետո հայ տարագիրների մի մասը, անցնելով հարավ, հասավ Կիլիկիայի շրջան, ուր 1080 թ. հիմնադրվեցին հայկական իշխանապետություններ, որոնք կազմակերպվելով 1198 թ. հիմնեցին Կիլիկիայի հայկական թագավորությունը։ Հայկական Կիլիկիայում իշխում էին Ռուբինյանները, Հեթումյանները, ապա Լուսինյանները։ Երկու դարից ավելի տևող ժամանակաշրջանում Կիլիկիայի թագավորներն ու առևտրականները սերտ կապեր ստեղծեցին Վենետիկի, Ջենովայի և այլ եվրոպական կենտրոնների հետ՝ հաճախ նրանցից ստանալով առևտրական մենաշնորհներ։

Սիսը դարձավ հայոց կաթողիկոսանիստ քաղաք և եկեղեցիներին կից ստեղծվեցին բազմաթիվ կրթօջախներ, դպրության և արվեստի կենտրոններ, հատկապես ծաղկում ապրեց միջնադարյան մանրանկարչությունը։ Կիլիկյան թագավորությունում ստեղծագործում էին մեծաթիվ մանրանկարիչներ և ծաղկողներ, այդ թվում՝ Թորոս Ռոսլինը, Սարգիս և Գրիգոր Պիծակները, որոնք հեղինակել են միջնադարյան արվեստի մի շարք գլուխգործոցներ։

Կիլիկյան թագավորության ծաղկուն շրջանը համընկավ խաչակիրների արշավանքներին, որոնց՝ դեպի Երուսաղեմ արշավող բանակի համար Կիլիկիայի քաղաքները բարեկամական ապաստարաններ էին։ Պետք է նշել, որ ոչ բոլոր խաչակիրներն էին իրենց հավատավոր քրիստոնյային վայել պահում։ Նրանցից շատերը շտապում էին լոպե առաջ հասնել Երուսաղեմ և քաղաքի հարուստ ավարից անմասն չմնալ։ Կիլիկիայի հայկական թագավորությունը դադարեց գոյություն ունենալ 1375 թ.։



Պատ. 2.12. 12-րդ դարի ֆրանսիական աշխարհացույց քարտեզ

Այս T–O տեսակի աշխարհացույցը կազմվել է Ֆրանսիայում և ունի նման քարտեզների յուրահատուկ կառուցվածք: Շրջանաձև աշխարհը Նեղոսի, Դոնի և Միջերկրականի ջրային տարածքներով բաժանված է երեք մասի: Սրանք են՝ վերևում՝ Ասիան, ձախում՝ Եվրոպան, աջում՝ Աֆրիկան, իսկ քարտեզի կենտրոնում Երուսաղեմն է: Արևելքը վերևում է, որտեղ նշված է Երկրային դրախտը՝ մակագրված Paradisus:

Ֆրանսիացիները սերտ կապեր ունեին Կիլիկիայի հայ թագավորների հետ, և հավանաբար այդ պատճառով էլ այս քարտեզի վերևի կեսի հատվածում, որն ամբողջությամբ ընդգրկում է Ասիան, առկա են երկու տարբեր Հայաստաններ՝ ընդգծված կապույտով: Մեկը Միջագետքից հյուսիս է, որը Մեծ Հայքն է, իսկ մյուսը Կիլիկիայի հայկական թագավորությունն է՝ Միջերկրականի հյուսիսարևելյան անկյունում:

Ասիայի երկրների շարքում Ադրբեջանի անունը բացակայում է:



Պատ. 2.13ա. Օրտելիոսի 1595 թվականի «Աշխարհացույցը»

Միջնադարյան կարևոր քարտեզագիրներից էր հոլանդացի Աբրահամ Օրտելիոսը (1528–1598)։ Փոքր չափերի պատճառով նա իր 1595 թ. այս «Աշխարհացույց» քարտեզում նշում է միայն կարևոր երկրները։ Եվրոպայում նշված են Հունաստանը, Իտալիան, Գերմանիան, Ռուսաստանը, Ֆրանսիան և «Անատոլիա» երկրամասը։ Իսկ Կովկասի հարավում նա նշում է միայն Հայաստան, Սիրիա և Իրան երկրները (տես Պատ. 2.13բ)։

Պատ. 2.13բ. Օրտելիոսի քարտեզի այս հատվածում Կովկասից հարավ ցուցադրված է միայն մեկ երկիր՝ Հայաստանը։ Դրա մոտակայքում նշված են միայն մի քանի կարևոր քաղաքների անուններ։

Հյուսիսում է Դերբենդը, արևելքում՝ Թավրիզը, հարավում՝ Մոսուլը, Հալեպը, Շիրազն ու Շոշը, ինչպես նաև Երուսաղեմն ու Բաղդադը, իսկ արևմուտքում են Տրապիզոնն ու Տրոյան։

Քարտեզի վրա Ադրբեջան անունով երկիր չի նշվում։

Պատ. 2.13բ



Պատ. 2.14. Ֆիլիպ Դելա Ռյուի՝ Հուստինիանոս կայսեր կողմից գրավված Հայաստանի քարտեզը՝ գծված 1653 թ.:

Բյուզանդիոնի Հուստինիանոս Առաջին կայսրը գահ բարձրացավ 527 թ.՝ ունենալով Հռոմեական կայսրությունը վերականգնելու երևակայական մի հեռանկար: Իր երկու զորավարների՝ Բելիսարիոսի և հայազգի Ներսեսի օգնությամբ նա գրավեց Իտալիայի, Աֆրիկայի և Իսպանիայի որոշ շրջաններ, ինչպես նաև Փոքր Հայքը, որը Մեծ Հայքից ու Եփրատից դեպի արևմուտք ընկած տարածքն էր:

Հուստինիանոսն իր վերահսկողությունը դյուրացնելու նպատակով Փոքր Հայքը բաժանել էր երեք մասի՝ դրանք կոչելով «Առաջին Հայք» (նարնջագույն), «Երկրորդ Հայք» (բաց կապույտ) և «Երրորդ Հայք» (վարդագույն) անուններով, որոնք ցույց են տրված քարտեզի ձախ կողմում:

Պարսկական գերիշխանության տակ գտնված Հայաստանի տարածքն անվանված է «Մեծ Հայք» (կանաչ), որի հյուսիսային սահմանն է Կուր գետը: Իսկ Արաքս գետից հարավ ընկած պարսկական Ատրպատական նահանգն անվանված է Atropatia, Media (Ադրբեջան, Մարաստան):

MARE NIGRUM
PONTUS EUXINUS
ERIVAN
KARA
BAGH
ARMENIA
BEIZANI
SCHIRWAN
Curdorum
Erivan
Tauris
Salamas
Ourmi
Lac Van
Van
Mosul
Hamadan
Derbend
Tiflis
Kars
Kala
Bajazid
Diarbekir
Aleppo
Sinope
Trebizond
Erzerum
Amasia
Tokat
Sivas
Kaisarieh
Ancyra
Brusa
Nicomedia
Constantinopolis
Adrianopolis
Salonichi
Smyrna
Aidin
Mania
Cyprus
Candia
Rhodus
Astrakan
Astrabat
Desert Beya
COMESTA
MASANDERAN
CHIWA
Sinus Yembensis
Desertum Turcomanense
Dzikia Pole
Perekoptura
Bialogorod
Bialabrzeg
Ostia Danubii
Budziac
Nagayenie
TARTARIA
CREMIA
Abcas
Awari
Petigoria
Astracan
Tartari Ozea coviendes
Tartari Ozea
Cubani
Cubanskoi
Kubanskoi
Kubanskoi Kosaki
Kosaki
Tavlisi
Kartli
Gurgistan
Georgia
Imeretia
Mingrelia
Guria
Curia
Pontus
Sinope
Amasia
Tokat
Sivas
Kaisarieh
Ancyra
Brusa
Nicomedia
Constantinopolis
Adrianopolis
Salonichi
Smyrna
Aidin
Mania
Cyprus
Candia
Rhodus
Astrakan
Astrabat
Desert Beya
COMESTA
MASANDERAN
CHIWA
Sinus Yembensis
Desertum Turcomanense
Dzikia Pole
Perekoptura
Bialogorod
Bialabrzeg
Ostia Danubii
Budziac
Nagayenie
TARTARIA
CREMIA
Abcas
Awari
Petigoria
Astracan
Tartari Ozea coviendes
Tartari Ozea
Cubani
C



Պատ. 2.16. Հատված Ֆռա Մաուրոյի «Աշխարհացույց» քարտեզից

Քարտեզը վենետիկցի Ֆռա Մաուրոյի 1460 թ. աշխարհացույցի կենտրոնական հատվածն է, որտեղ հարավը քարտեզի վերևում է: Այստեղ կարելի է տեսնել Կովկասը և դրա հարավային շրջանը: Քարտեզի կենտրոնում՝ Կասպից և Սև ծովերի միջև և նրանցից հարավ, «Հայաստան» անունը նշված է հինգ անգամ, առաջինը՝ որպես Մեծ Հայք, ապա (3 տեղ)՝ Փոքր Հայք, և վերջապես, քարտեզի վերևի աջ անկյունում նշված է Միջերկրականի ափին Կիլիկիայի հայկական թագավորության տարածքի վրա: Քարտեզի վրա Հայաստան անվանումներն ընդգծված են կարմիրով:

Նույն տեղում կապույտով ընդգծված են «Արարատները» և Նոյյան տապանը, իսկ կանաչով ընդգծվածը նշվում է «Ղարաբաղի լեռներ»: Առաջին անգամ եվրոպական այս քարտեզում է, որ հիշատակվում է Ղարաբաղ անվանումը:

Հայաստանը մի քանի անգամ նշելը ցույց է տալիս, որ Եվրոպայի կրթված և առևտրական շրջանակներում Հայաստանը ճանաչված և կարևոր մի երկիր էր, քանի որ նրա հարևաններից այստեղ միայն մեկ անգամ են երևում Վրաստան և Աբխազիա անվանումները Սև ծովի ափերի մոտ, մեկ անգամ էլ Շիրվանը՝ Կասպից ծովի արևմտյան ափերին: Ադրբեջան անվանումն ընդհանրապես քարտեզից բացակայում է:

MER NOIRE
al. PONT EUXIN
MER DE KILAN
al. MER CASPIENE
TURQUIE
ASIE
Turcomanie
al. Armenie
Kilan
Curdistan
Diarbech
Assirie
ARAK
PERS
MER
MEDITERRANÉE
Mer de Levant
Isle de Chipre
Arabie
Deserte
Arabie
Petrée
EGIPTE
Sahid
Barca
Beduins
Bengebres
ARABIE
MER ROUGE
Tropique de Cancer
Arabie Heureuse
Cercle sous le Zibu
Fars
Colfe de Basson
Colfe de Catif
Chusistan
Mezanderan
Tebersestan
Estarabad
Kaschan
Desert
Schirwan
Kachet
Curiel
Natolie
Asie Mineure
Aramanie
Adherbeitzan
Bassora
Baghdad
Maffir
Abadan
Bahe
El-Catif
Lahsa
Mascat
Iemen
Sohar
Macare
Tabala
Caussmurt
Sachala
Mecqen
Tamama
Thaulabia
Tangia
Tchack
Chaibar
Nejd
Maior
Bajlarlar
Dzebel-Maragfat
Tibi
Curie
Dagmar
Mascat
Sir
Curchaidet
Bouvanie
Tikri
Harvias
Suse
Rudhan
Persepolis
Schiras
Daraz
Siraf
Kom Sel
Hamadan
Chulpagan
Tagiabad
Ispahan
Komischa
Larcoea
Yezd
Kasbin
Casbin
Tauris
Erzerum
Erzingan
Trebisonde
Sinope
Amasie
Angoure
Sivas
Caesaria
Tiana
Malatia
Marat
Adana
Mamistra
Tripoli
Aleppo
Hama
Hems
Damas
Tripoli
Rhodes
Candie
Scandante
Cipre
Rosette
Caire
Suez
Acaba
Gaza
Ascalon
Jaffa
Ramla
Nablus
Jerusalem
Bethlehem
Hebron
Beirut
Damas
Tripoli
Aleppo
Bir
Orfa
Erzerum
Erzingan
Tiziere
Mossul
Ninive
Tigre
Euphrate
Bagdad
Bassora
Tigre
Euphrate
Indus
Ganges
Gulfe de Cambaye
Gulfe de Bengala
Ceylan
Malabar
Goa
Cochin
Calicut
Cambaye
Ormus
Mecqen
Macare
Tabala
Caussmurt
Sachala
Iemen
Lahsa
Mascat
Sohar
Bahe
Tamama
Maffir
Abadan
Bassora
Tchack
Thaulabia
Tangia

Պատ. 2.18. Քյաթիբ Չելեբիի Իրանի քարտեզը, հրատարակված 1732 թ.

Քարտեզն օսմանցի Քյաթիբ Չելեբիի «Իրանի» պատկերն է։ Այստեղ Օսմանյան և Պարսկական կայսրությունների սահմանը, Պատ. 2.17 քարտեզի համեմատ, ամբողջովին փոխված է։ Պարսկաստանի սահմանն ընդլայնվել ու տարածվել է դեպի արևմուտք՝ ներգրավելով Էրզրում ու Դիարբեքիր քաղաքները, ներառելով նաև համարյա ամբողջ Մեծ Հայքը, ինչպես նաև Կովկասի Վրաստանի հարավային շրջանը, Աղվանքը և Շիրվանի տարածաշրջանը։

Այս քարտեզի ցուցատախտակը նշում է, որ դրանում ցույց են տրված Իրանի Սեֆյանների իշխանության վերջին օրերի սահմանները։ Այստեղ կարելի է տեսնել բնիկ հայ ժողովրդի ճակատագիրը որոշող դեպքերի դրոշմը և Հայաստանի՝ ձեռքից ձեռք անցնելու իրավիճակը։

Այս պատճառով էր, որ 1604–1605 թթ. պարսից Շահ Աբբասը Նախիջևանից, Սյունիքից ու Ղարաբաղից Իրան բռնագաղթեցրեց ավելի քան 300,000 հայ՝ տարածքը ամայացնելու և օսմանցիների համար անցանկալի դարձնելու, ինչպես նաև հայ արհեստավորների և առևտրականների հաշվին Իրանի տնտեսությանը զարկ տալու նպատակով։

Հայ առևտրականներին վերաբնակեցնելով իր մայրաքաղաք Սպահանում՝ շահը նրանց տվեց իրավունք և մենաշնորհներ՝ օգտագործելու իրենց առևտրական կապերը հօգուտ Իրանի տնտեսության բարելավման։



Պատ. 2.19. Սա հատված է ֆրանսիացի Գիյոմ Դելիլի կամ դե Լ՚իլի 1730 թ.
«Կասպից ծովի շրջանի երկրները» կոչված քարտեզից:

Քարտեզը ցուցադրում է Կասպից ծովի շրջանը, Հայաստանը, որի հյուսիսում են Մեգրելիան և Քարթվելին–Վրաստանը, արևելքում՝ Դաղստան, Դերբենդ, Շամախի շրջանները՝ իրենց ընդհանուր «Շիրվան» անվանումով: Տեսանելի է, որ Արաքսից հյուսիս Ադրբեջան անունով երկիր գոյություն չունի: Այստեղ կան կանաչ ներկված շրջաններ, որոնք իսլամական խանություններ են: Դրանց տարածքը 1918 թվականից ի վեր միասնաբար կոչվեց Ադրբեջանի Հանրապետություն: Քարտեզի վրա Արաքս գետից հարավ պարսկական «Ադրբիջան» անվանված նահանգն է՝ ներկված մանուշակագույն, որը հայերս կոչում ենք իր հնագույն՝ «Ատրպատական» անունով (տես գրքիս «Ներածականը»):

Երևանի և Հայաստանի անունները ներկված են դեղին և տարածվում են հարավում Արաքսից դեպի հյուսիս և արևմուտք: Հայաստանի շրջանում են նշված Բայազեդը, Շարուրը, Արարատները, Մակուն, Էջմիածինը (Ուչքիլիսա), Արտաշատը, Դվինը (Դայվին), Նախիջևանը, Կապանը, Սևանա լիճը և այլն:

Պատ. 2.20. Ցարական Անդրկովկասը 1829 թ.

Պատ. 2.21. Ցարական Անդրկովկասը 1881 թ.

Պատ. 2.20 և 2.21. Տասնիններորդ դարասկզբին երբ ցարական Ռուսաստանը սկսեց լրջորեն զբաղվել դեպի հարավ ընդարձակման ծրագրով, ավարտվեց շուրջ երեք հարյուր տարի Կովկասի մեծ մասին տիրող Իրանի գերիշխանությունը։

Այսպիսով՝ վերջին տարիների ընթացքում Իրանի Ղաջար թագավորական ընտանիքը, ձախողելով իր կարևոր երկու պատերազմները, աստիճանաբար Ռուսաստանին հանձնեց Կովկասում գրաված իր տարածքները։ 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանին փոխանցվեցին Դերբենդի, Շաքիի, Շամախիի և Գանձակի, Թալիշի և Ղարաբաղի խանությունները, ինչպես նաև Սյունիքը, Լոռին և Վրաստանի մի մասը։

Այս շրջանները կորցնելուց հետո 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Իրանը նաև կորցրեց Երևանի և Նախիջևանի խանությունները։ Դրանից հետո Երևանի նահանգի և Օսմանյան կայսրության սահմանն անցնում էր Արարատների գագաթներով։ Այդ ժամանակ Կարսի շրջանը դեռ Օսմանյան կայսրության տարածքում էր, որը 1878 թ. անցավ Ռուսաստանին։ Իսկ 1921 թ. խորհրդային իշխանությունները Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Թուրքիային հետ տվեցին Կարսի մարզը՝ նրանց հանձնելով նաև Արարատները և Սուրմալուի գավառը։ Սակայն պետք է նշել, որ երկկողմ պայմանագիր ստորագրողները պաշտոնապես իրավասու չէին նման պայմանագիր ստորագրելու։

Սահմանների փոփոխությունից հետո մի քանի տարի այս շրջանը կոչվում էր Հայկական մարզ, իսկ հետո անվանափոխվեց՝ դառնալով Էրիվանի նահանգ, որի մեջ էր մտնում նաև Նախիջևանը։ Կովկասից հարավ շրջանի տեղանունները և նրանց սահմանները պարզապես ռուսական վարչակարգի քմահաճույքի և դյուրության նպատակով էին արվում, որոնք տեղի ժողովրդագրության հետ ոչ մի առնչություն չունեին։ Նույն ընթացքում Բաքվի նահանգի մեջ էր մտնում միայն Ապշերոն թերակղզու հարակից շրջանը՝ Ղուբայից մինչև Իրանի սահմանը, այսինքն՝ ներկա Ադրբեջանի տարածքի միայն մեկ հինգերորդը, առանց Շուշի, Ելիզավետպոլ (Գանձակ) և Նուխի քաղաքների ու շրջանների։

Այս երկու քարտեզները ցույց են տալիս ներքին վարչական տարբեր բաժանումներ, որոնք որպես օրինակ են ընտրված շուրջ մեկ տասնյակ տարբերակներից՝ սկսած 1829 թ. մինչև 1918 թ.։ Այս բոլոր փոփոխությունների ընթացքում տարածաշրջանում Ադրբեջան անունով որևէ շրջան կամ նահանգ գոյություն չի ունեցել։ Անվանումը հայտնվել է միայն 1918 թ.։



Պատ. 2.22. 1877 թ. օսմանյան ռազմական քարտեզ

Օսմանյան այս քարտեզը կազմել է կայսրության ռազմական նախարարությունը 1877 թ.՝ ցույց տալու Ռուսաստանի հետ ունեցած պատերազմի շրջանները։ Այստեղ Հայաստան անունը նշված է հետևյալ տարածքների վրա՝ հյուսիսում Էրզրումն է, հարավում՝ Վանա լիճն ու Բիթլիսը, արևմուտքում՝ Մալաթիան, արևելքում՝ Արևելահայաստանի Սևանի շրջանը, որի անվանումը ընդգծված է կապույտով։ Այսինքն՝ Հայաստանը Օսմանյան և Ռուսական կայսրությունների գրաված տարածքներում է՝ Արաքսի երկու ափերին։ Իսկ Ադրբեջան անվանումը միայն տրված է Իրանի Ատրպատական նահանգին՝ քարտեզում ընդգծված կանաչով։ Վրաստանը և Դաղստանը Հայաստանից հյուսիս և հյուսիս–արևմուտք են։ Ներկա Ադրբեջանի Հանրապետության տարածքն անվանված է Շիրվան և ընդգծված է դեղինով, որը ժամանակին այս տարածքի հանրաճանաչ անվանումն էր։ Կարմիրով ընդգծվածը Օսմանյան կայսրության անվանումն է։

Այս անգամ ևս Օսմանյան կայսրությունում ապրող հայերի ճակատագիրը մնաց եվրոպական՝ իրար հետ հակասություն ունեցող պետությունների հայեցողությանը։ Որպես հատուցում՝ Օսմանյան կայսրությունը Մեծ Բրիտանիային հանձնեց Կիպրոսը, որտեղ Բրիտանիան նպատակ ուներ ռազմական հենակետ հիմնելու, իսկ սուլթանն ու Դիզրայելին հայերի արյան գնով լուծեցին իրենց խնդիրները։ Որպես հայկական պատվիրակության ղեկավար՝ Խրիմյան Հայրիկը ևս մասնակցեց 1878 թ. Բեռլինի վեհաժողովին, որից նա վերադարձավ հուսախաբ և ձեռնունայն։

Պատ. 2.23. Դեղինով նշված է թյուրքախոս երկրների գոտին, որը հատում է Հայաստանը:

19–20 դդ. Ռուսաստանի և Օսմանյան կայսրության թյուրքական ցեղախմբերը հիմնեցին պանթյուրքական տեսությունը, ըստ որի՝ քարտեզի վրա նշված բոլոր թյուրքախոս ցեղախմբերը պետք է միանային և կազմեին պանթյուրքական պետությունների միացյալ մի գոտի: Կարիք կա նաև հիշեցնելու, որ ներկայում առկա Կենտրոնական Ասիայի հինգ երկրները և Ադրբեջանը ստեղծվեցին միայն 1918–1936 թթ. ԽՍՀՄ-ի ձեռքով և տարածքում՝ երկրի անվանումներ տալով տեղաբնակ՝ հիմնականում քոչվոր ցեղերին, նրանց պարտադրելով փոխել իրենց ապրելակերպը և ունենալ մշտական նստավայրեր: Պանթյուրքական գոտին ամբողջացնելու համար, որը տարածվում էր Բալկանյան երկրներից մինչև Չինաստան, միակ խոչընդոտը քրիստոնյա Հայաստանն էր, որն ինչ-որ կերպով պետք էր ճանապարհից հեռացվեր:

Պանթյուրքիզմի շարքերին միացան օսմանյան սուլթանները և հատկապես Երիտթուրքերը, որոնք պարբերաբար կազմակերպեցին հայերի երկու ցեղասպանությունները 1894–1896 և 1915–1923 թթ.՝ հայ, հույն և ասորի քրիստոնյաներից մաքրելով Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթները, որոնք քարտեզում նշված են բաց կարմիրով: Սակայն 1918 թ. հիմնադրվեց Հայաստանի Առաջին

Հանրապետությունը՝ նշված կարմիրով, 1920 թ. ընդունելով կոմունիստական կարգերը, և այսպիսով օսմանյան պանթյուրքական գոտու ծրագիրը մնաց անկատար։

Ներկա Ադրբեջանի անկախությունից հետո նրա իշխանությունները քաջալերվում են նաև Թուրքիայում 1968 թ. ստեղծված «Գորշ Գայլեր» ծայրահեղական ազգայնականների ծրագրերով և գործունեությամբ։ Այսպիսով՝ Թուրքիան և Ադրբեջանն աշխատանք են տանում նույն ուղղությամբ՝ նպատակ ունենալով Հայաստան կոչված սեպը հեռացնել իրենց ճանապարհից կամ նրան շրջանցել։

Իսկ «Գորշ Գայլերի» կազմակերպության ղեկավարը 2021 թ. նոյեմբերին Թուրքիայի նախագահ Էրդողանին նվիրեց վերը բերված քարտեզի տարբերակը, որը ներառում է հսկա տարածք նաև Սիբիրից՝ տարածվելով մինչև Հյուսիսային սառուցյալ օվկիանոս։ Այս առթիվ Ռուսաստանի Դաշնության մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ հայտնեցին իրենց զայրույթ, քանի որ պանթյուրքական հավակնած գոտին ներառում էր Ռուսաստանին պատկանող Սիբիրից հսկայական մի հատված։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ



Պատ. 3.1. Հայաստանի նոր հանրապետության տարածքի համար կազմված քարտեզը, որը հիմնված էր Սևրի դաշնագրի որոշումների վրա։ Այսպիսով՝ Հայաստանի տարածքը լինելու էր դեղինով, կարմիրով ու վարդագույնով ցուցադրվածները միասնաբար։

Այս որոշումներն ամեն դեպքում չիրագործվեցին, քանի որ Անտանտի պետությունները աշխատում էին Թուրքիային ու Ադրբեջանին ճնշման տակ չդնել, ու ի վերջո Հայաստանի Առաջին Հանրապետությանը հատկացվեցին կարմիրով ու վարդագույնով նշված տարածքները։ Հայաստանի խորհրդայնացումից հետո մեկ տարվա ընթացքում Թուրքիային և Ադրբեջանին տրվեցին կարմիրով նշված տարածքները ևս։ Այսպիսով՝ Հայաստանին բաժին մնաց միայն վարդագույնով նշված փոքրիկ տարածքը։



Պատ. 3.2. Հայաստանի Առաջին Հանրապետությանը նախորդող Անդրկովկասյան կոմիսարիատի Հայաստանի քարտեզը, որը տարածվում էր Օլթիից մինչև Ղարաբաղ: Սակայն այս օրերից արևելյան մասերում նորաստեղծ Ադրբեջան երկիրն արդեն ուներ իր տարածքային նկրտումները և պահանջները: Քարտեզում նշված ամբողջ տարածքը 1920 թ. դեկտեմբերի 2–ի պայմանագրով հանձնվեց Սովետական Հայաստանի իշխանությանը:

Քարտեզի վրա կանաչով շրջապատված տարածքը ներառում էր Անին, Արարատները, Բորչալուի գավառը և Կարսը, որոնք Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով հանձնվեցին Թուրքիային, որպեսզի Թուրքիայի ղեկավարությունը բարեկամական կապ պահի Խորհրդային Միության կոմունիստների հետ, որը, սակայն, իզուր անցավ, և Թուրքիան, աստիճանաբար հեռանալով կոմունիստական Խորհրդային Միությունից, դարձավ արևմտյան երկրների բարեկամը:

Իսկ այստեղ կապույտով շրջափակված տարածքները 1921 թ. հուլիսին Ստալինի և Կովկասյան բյուրոյի որոշումով հանձնվեցին Ադրբեջանին:

Տես Պատ. 3.4–ի բացատրությունները:



Պատ. 3.3. 1920–ի նոյեմբեր 29–ին Հայաստանն ընդունեց խորհրդային կարգերը, և մյուս օրը Ադրբեջանի կոմունիստական ղեկավարությունը որոշում կայացրեց, որով վիճելի տարածքներից հիմնականում հայաբնակ Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը այսու կլինեին Հայաստանի տարածքում։ Պետք է նշել, որ Լեռնային Ղարաբաղ անվանման տակ էին ներկայիս Արցախը, Քաշաթաղը և Քարվաճառը, որոնք համարվում էին միասնական տարածք՝ «Լեռնային Ղարաբաղ»։

Այսպիսով, երբ դեկտեմբերին Հայաստանի ամբողջ տարածքը 43,000 քառ. կմ էր, խորհրդայնացվեց։

Ինչպես նշվեց նախորդ էջում, Ռուսաստանի Դաշնությունը և ապա ԽՍՀՄ–ի ղեկավարությունը, առանց երկար սպասելու, սկսեց այս սահմանները ևս ենթարկել փոփոխության և իր կապերը բարելավելու նպատակով սկսեց հարևաններին հողամասեր հատկացնել Հայաստանի տարածքներից՝ սկսած Նախիջևանից ու Լեռնային Ղարաբաղից մինչև անկլավներ Հայաստանի տարածքից, ինչպես նաև Ադրբեջանի քրդերի համար թիրախավորված արոտավայրեր։ Այլ կերպ ասած՝ առկա խնդիրները լուծեցին ի հաշիվ Հայաստանի։



Պատ. 3.4 – Այս քարտեզի կանաչով շրջանակված տարածքները նրանք են, որոնք 1920 թ. նոյեմբերի 30-ին Ադրբեջանի իշխանությունները հայտարարեցին, որ հանձնում են Հայաստանին։ Այս որոշմանը հակառակ, 1921 թ. Մարտի 16-ին Մոսկվայի պայմանագրով Լենինը Նախիջևանին տվեց Ինքնավար Հանրապետության կարգավիճակ և տարածքը հանձնեց համայնավար Ադրբեջանի իշխանություններին։
Ադրբեջանի 1920 թ. նոյեմբեր 30-ի որոշումը Ստալինը Բաքվում 1921-ի հուլիսի 4-ին սկզբում վավերացրեց, սակայն հուլիսի 5-ին նրա ղեկավարած Կովկասյան բյուրոն փակ նիստից հետո հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղի տարածքը ևս պետք է տրվի Ադրբեջանին։
Ադրբեջանին փոխանցված տարածքները ներառում էին նաև Արևելյան Սյունիքը, որի արևելյան սահմանը մինչ այդ Հագարու (Աղավնու) գետն էր։ Այսպիսով՝ Նախիջևանից ու Լեռնային Ղարաբաղից բացի, Սյունիքի արևելյան մասից Ադրբեջանին հանձնվեց նաև մի քանի հարյուր քառ. կմ. հայկական տարածք։

Պատ. 3.5. Խորհրդային Հայաստանը ըստ 1926 թ. Խորհրդային մեծ հանրագիտարանի

Այստեղ Հայաստանի տարածքում կանաչով նշված են այն տարածքները, որոնք Ադրբեջանին տրվեցին հաջորդ տասը տարիների ընթացքում: Իսկ քարտեզում ընդհանրապես որևէ անկլավ գոյություն չունի՝ ոչ հայկական և ոչ էլ ադրբեջանական:

Քարտեզի վրա նշված են «Հայաստանի սահմանները 1926 թ. ապրիլի 1-ին»: Եթե ԽՍՀՄ-ում քարտեզը տպագրվում էր, ապա անպայման պետք է ունենար մի քանի նախարարությունների պաշտոնական վավերացումը, որոնցից էր առաջին հերթին անվտանգության նախարարությունը, որի անունը նշված է որպես քարտեզի հեղինակ: Հետևաբար այս քարտեզը ցույց է տալիս 1926 թ. Հայաստանի սահմանների իրական վիճակը:

Երբ 2021 թ. հոկտեմբերին նախագահ Պուտինը հայտարարեց, որ Ռուսաստանն անպայման պետք է մաս կազմի Հայաստանի և Ադրբեջանի միջև կատարվելիք նոր սահմանագծմանը, պատճառաբանեց, որ միայն իրենց բանակի գլխավոր շտաբը Մոսկվայում ունի սահմանների ճշգրիտ քարտեզները: 1929-ից հետո կազմված խորհրդային գլխավոր շտաբի քարտեզներն ունեն բոլոր կողմերը, սակայն ավելի վաղ քարտեզները, օրինակ՝ վերոնշյալ 1921-1923 թթ. մանրակրկիտ քարտեզները, միայն Մոսկվան ունի: Հետևաբար նախագահ Պուտինի նշած քարտեզները հենց նրանք են, որոնք միայն Մոսկվան ունի, որոնք պետք է լինեն նաև Պատ. 3.5 քարտեզի հիմնական սկզբնաղբյուրը:

Պետք է նաև նշել այն, որ քարտեզի վրա Հայաստանն ու Արցախը սահմանակից են, և նրանց բաժանում է միայն Հագարի կամ Աղավնու գետը՝ այստեղ նշված կապույտ սլաքով:

Պատ. 3.6. Այս քարտեզը հրատարակվել է 1927 թ. Հայաստանում 1926 թ. վիճակագրությունից հետո: Քարտեզը ցուցադրում է, որ Հայաստանի տարածքում որևէ ադրբեջանական անկլավ, այսինքն՝ տարածք, որը Հայաստանի սահմանների մեջ է, բայց պատկանում է Ադրբեջանին, գոյություն չունի: Այստեղ Արծվաշենը Հայաստանին է միացած վերջինիս պատկանող մի պարանոցով:

Այս քարտեզում դեռևս Հայաստանի մեջ են Ալ լճերը և Սյունիքի արևելյան հատվածները, որոնք Ադրբեջանին հանձնվեցին ավելի ուշ՝ 1927–1938 թթ.:



Պատ. 3.7. Հայաստանի քարտեզը 1932 թ.: Ըստ այս քարտեզի՝ Հայաստանի տարածքում դեռևս որևէ ադրբեջանական անկլավ գոյություն չունի, սակայն կարմիր սլաքները ցույց են տալիս, որ Արծվաշենի շրջանից արդեն որոշ մասեր տրված են Ադրբեջանին: Ադրբեջանին է տրված նաև Ալ լճերի շուրջ 200 քառ. կմ տարածքը այն պատճառաբանությամբ, թե Ադրբեջանը պլանավորել էր ստեղծել Կարմիր Քրդստան նահանգը, որտեղ բնակվելու էին քրդերը, որոնք ոչխարների հոտերի համար կարիք կունենային նոր արոտավայրերի Հայաստանի ինքնիշխան տարածքից:

Կապույտ սլաքը ցույց է տալիս, որ Ադրբեջանն արդեն յուրացրել է Լաչինի՝ Հայաստանին կից և մոտակա տարածքը՝ այսպիսով Արցախի սահմանը հեռացնելով Հայաստանից՝ երկու շրջանների հայ բնակչությանն իրարից ֆիզիկապես հեռացնելու նպատակով: Համեմատելու համար տեսեք Պատ. 3.5 քարտեզի նույն շրջանը:

Պատ. 3.8. Հայաստանի քարտեզը 1938 թ.: Այստեղ արդեն տեսանելի են երկու ադրբեջանական նորաստեղծ անկլավներ՝ երկուսն էլ Հայաստանի Տավուշի տարածքում: Երրորդ անկլավը Արարատյան դաշտում գտնվող Տիգրանաշեն–Քյարքի անկլավն է, որն այստեղ դեռ գոյություն չունի:

Սակայն Արծվաշեն անկլավը, որ ունի հետաքրքիր պատմություն, արդեն Ադրբեջանի տարածքում է: Սկզբում՝ 1926թ., Արծվաշենը և նրա շրջապատը Հայաստանի տարածքում էին: Ապա Ադրբեջանը վերցրեց դրա շրջակա տարածքները՝ Հայաստանին թողնելով դեպի այնտեղ տանող մի նեղ ճանապարհային պարանոց: Իսկ այս քարտեզում Ադրբեջանն արդեն տիրացել է նաև այդ պարանոցին՝ Արծվաշենը դարձնելով հայկական անկլավ Ադրբեջանի տարածքում:

Պատ. 3.9. Հայաստանի քարտեզը 1940 թ.։ Նախկին քարտեզից միայն 2 տարի անց այստեղ արդեն առկա է Ադրբեջանի երրորդ անկլավը՝ Տիգրանաշենը՝ ներքևում նշված կարմիր սլաքով, և հայկական անկլավ Արծվաշենը՝ նշված կապույտով Ադրբեջանի տարածքում։

Կարևոր է նշել, որ, ըստ երևույթին, անկլավների ստեղծումը ունեցել է քաղաքական նպատակ։ Եթե նպատակն էր թուրքաբնակ տարածքները հանձնել Ադրբեջանին, իսկ հայաբնակ շրջանները՝ Հայաստանին, ապա խորհրդային տարիներին Հայաստանում առկա էին բազմաթիվ այլ թրքաբնակ գյուղեր, որոնք անկլավներ չէին։ Նույն որոշման համաձայն՝ հայաբնակ Արցախը պետք է լիներ Հայաստանի անկլավ Ադրբեջանում։ Հետևապես անկլավների ստեղծման պատճառը այդ տարածքում ապրողների ազգությունը չէր, այլ մեկ ուրիշ կարևոր ու անհայտ շարժառիթ։

Արծվաշեն անկլավը Ադրբեջանի մի խոշոր անկյունում է, որը ռազմավարական որևէ նշանակություն չունի, իսկ ադրբեջանական անկլավները Հայաստանում հիմնականում նստած են հայկական մայրուղիների վրա և վերահսկվում են Ադրբեջանի կողմից, որը Ադրբեջանին տալիս է ռազմավարական հսկայական առավելություն։

Պատ. 3.10. Քարտեզը ներկայացնում է Հայաստանը և Արցախը 1985 թ.: Այստեղ կապույտով նշված են 1925–1940 թթ. տարբեր պատճառներով Հայաստանից վերցված և Ադրբեջանին տրված տարածքները: Սրանք Ադրբեջանին հանձնելու հիմնական պատրվակն այն էր, որ Արցախի և Հայաստանի միջև Ադրբեջանը ծրագրում էր ստեղծել Կարմիր Քրդստան անվանված գավառը, որտեղ պետք է տեղափոխվեին Ադրբեջանի տարբեր շրջաններում բնակվող խաշնարած քրդերը, որոնք, ըստ ադրբեջանական մարդահամարի, կազմում էին շուրջ 34,000 շունչ:

Ըստ Ադրբեջանի՝ քրդերին հատկացվելիք տարածքը, լինելով լեռնային, խաշնարածների համար չուներ բավարար արոտավայրեր, որոնք, սակայն, կային Հայաստանի տարածքում: Այս նկատառումով ժամանակի Անդրկովկասյան Դաշնությունը, որի կազմի մեջ էին Ադրբեջանը, Հայաստանը և Վրաստանը, տարբեր նիստերի որոշումներով Ադրբեջանին է հատկացրել ավելի քան հազար հինգ հարյուր քառ. կմ դաշտ ու արոտավայր քուրդ խաշնարածների ապրուստն ապահովելու նպատակով: Այս տարածքների հանձնումները հաճախ կատարվել են առանց նույնիսկ տեղաբնակների գիտության, նրանց օգտագործած դաշտերի և արոտավայրերի հաշվին: Տես Պատ. 3.11:

Տարածքներ են հանձնվել Սյունիքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերից: Բացի դրանցից՝ Հայաստանի տարածքում ստեղծվել է երեք ադրբեջանական անկլավ, իսկ Արծվաշենը, որը 1926 թ. դեռ Հայաստանի տարածքում էր, հանձնվել էր Ադրբեջանին որպես հայկական անկլավ Ադրբեջանի տարածքում:



Պատ. 3.11. Այս քարտեզը Հայաստանի Ալ լճերի շրջանն է, որը Սևանի հարավ–արևելքում է և Հայաստանի կարևոր ջրային ռեսուրսներից մեկն է:

Տարածքը Հայաստանին էր պատկանում մինչև շուրջ 1929 թ., որից հետո այս քարտեզով Հայաստանի իշխանություններին տեղեկացվում է, որ սև գծով նշված Ադրբեջան–Հայաստան սահմանի կարմիրով նշված հատվածը չեղյալ է հայտարարվում, և նոր սահմանը որոշված է դեղինով գծվածը: Այսպիսով՝ Հայաստանից ավելի քան 200 քառ. կմ տարածք տրվում է Ադրբեջանին:

Երբ շրջանի գյուղացիները կատարվածի մասին գրավոր բողոք ներկայացրին, նրանց բողոքը չընդունվեց՝ հիմնավորումով, որ սահմանազատումն արդեն կատարված է և քննարկման առարկա չի կարող լինել:

Քարտեզը և դրան կից բողոքի նամակներն առկա են Հայաստանի ազգային արխիվում:

Պատ. 3.12. Տիգրանաշեն–Քյարքի անկլավը ներկայում

Սույն աշխատության մեջ Հայաստանի Պատ. 3.6, 3.7 և 3.8 վերատպված քարտեզներում բացահայտ երևում է, որ մինչև 1938 թ. Տիգրանաշեն գյուղի մոտից անցնում էր մի երկրորդական ճանապարհ, որը Սադարակը միացնում էր դեպի Գորիս, Արցախ և Մեղրի գնացող ճանապարհին: Ինչպես պարզ երևում է, մինչև 1938 թ. այս ճանապարհի վրա ոչ մի ադրբեջանական անկլավ գոյություն չուներ:

Հանկարծ 1940 թ. քարտեզի վրա հայտնվում է այս անկլավը, որ կոչվում է «Քյարքի» կամ «Տիգրանաշեն»: Նախկին ճանապարհը, որի վրա տեղադրված է այս նոր անկլավը, 1960 թ. վերակառուցվում է ու դառնում է Երևանից դեպի հարավ և արևելք անցնող ամենակարևոր մայրուղին՝ M–2–ը, որով անցնող շուրջ երկու կիլոմետր հատվածն այսպիսով տրվել էր Ադրբեջանին:

Ներկայում եթե Ադրբեջանը տիրանա այս անկլավին, Երևանը Արենիին, Վայոց Ձորին, Սիսիանին, Գորիսին, Արցախին, Կապանին, Մեղրիին և Իրանին կապող մայրուղին բեռնատարների ու մեծ ավտոբուսների համար կդառնա անհասանելի, քանի որ Վեղիի գյուղերով դեպի Ջանգակատուն հասնող տարանցիկ ճանապարհը շատ նեղ է մեծ փոխադրամիջոցների համար:

Իսկ ինչո՞ւ է ադրբեջանական անկլավը Հայաստանի M–2 մայրուղու վրա, դրա պատասխանը պետք է Խորհրդային ճանապարհաշինությունը և կառավարությունը տա:

Պատ. 3.13. Քարտեզում նշված է Հայաստանի հյուսիսային Տավուշի և Ադրբեջանի սահմանը և Իջևանից դեպի Նոյեմբերյան տանող M–16 մայրուղին:

Եթե նայենք 1926 թ. Հայաստանի քարտեզին (Պատ. 3.5), ապա տեսանելի է, որ դրա վրա Ադրբեջանի սահմանն անցնում է վերոբերյալ քարտեզում բաց կանաչ գույնով նշված գետի ուղղությամբ, իսկ քարտեզ 3.13–ի վրա նշված երկու անկլավները, ինչպես նաև մյուս անկլավը, Պատ. 3.5–ի քարտեզից ընդհանրապես բացակայում են:

Տավուշի երկու հյուսիսային անկլավները հայտնվեցին Պատ. 3.8–ի քարտեզի վրա 1938 թ.: Ինչպես տեսնում ենք, Բարխուդարլու կոչված նորաստեղծ անկլավը հատում է Հայաստանի M–4՝ Իջևան–Ղազախ տանող մայրուղին, իսկ ավելի մեծ՝ Ասկիպարա անկլավը Ոսկեպարից արևմուտք է և ընդհանրապես ճանապարհի վրա չէ:

Այս «պակասությունը շտկելու» նպատակով վերոբերյալ քարտեզում նշված երկու սեպաձև անմարդաբնակ հողամասերը Հայաստանից վերցվել ու տրվել են Ադրբեջանին, որպեսզի Հայաստանի M–16 մայրուղին պարտադիր հինգ անգամ հատի Ադրբեջանի սահմանը և ամեն անգամ մի քանի հարյուր մետր անցնի Ադրբեջանի տարածքով:

Այսպիսով, հիմնելով Բարխուդարլուն, նաև հողամասերն էլ Ադրբեջանին տալով, ԽՍՀՄ–ն վստահ է լինում, որ Հայաստանի հյուսիսային՝ դեպի Վրաստան և Ադրբեջան տանող մայրուղիները կարող են լինել Ադրբեջանի անմիջական հսկողության ներքո:

Կատարված փոփոխություններով հայկական Ոսկեպար գյուղը մնում է Ադրբեջանի կազմում և ադրբեջանական անկլավ Ասկիպարայի կողմից շրջափակված մի նեղ պարանոցի մեջ:



Պատ. 3.14. Հատված 1970 թ. Խորհրդային զինվորական գլխավոր շտաբի կազմած Շուռնուխի շրջանի քարտեզից, որն, ըստ ԽՍՀՄ օրենքի, պահպանվում է գաղտնի: Սակայն այսօր սրանք հասանելի են համակայքում:

Քարտեզի վրա գունավորված են սահմանն ու ճանապարհը: Կապույտով նշված են երկու երկրների սահմանը հատող կետերը:

Պատ. 3.14. քարտեզի վրա Ադրբեջան–Հայաստանի սահմանը ցույց է տրված կարմիրով, որը գծվել է Խորհրդային Միության կարգադրությամբ: Սահմանը այսպիսին է եղել դեռ 1930–ականներից: Իսկ Հայաստանի M–2 մայրուղին կառուցվել է 1953–1960 թթ., որը նշված է դեղինով:

1970 թ. զինվորական մանրակրկիտ քարտեզից պարզ երևում է, որ Գորիս–Կապան մայրուղու հատվածը սկզբում մտնում է Ադրբեջանի Էյվազլի գյուղի տարածքը՝ անցնելով ավելի քան տասնյակ կիլոմետր, ապա վերադառնում Հայաստան և անգամներ սահմանը հատելով՝ գնում դեպի Շուռնուխ:

Քարտեզի վրա մայրուղու սահմանի հատման տեղերը նշված են կապույտ սլաքներով: Իսկ Շուռնուխում սահմանն ուղղակի անցնում է գյուղամիջի ճանապարհով, որի կենտրոնական սպիտակ գծի մի կողմը Հայաստանն է, իսկ մյուսը՝ Ադրբեջանը, այդպես գյուղը բաժանվում է երկու մասի:

Խորհրդային իշխանության օրերին սա խնդիր չէր, քանի որ հարևան՝ այսպես կոչված «եղբայրական» հանրապետությունների միջև գործնական սահման գոյություն չուներ: Սակայն դա կարևորություն ստացավ, երբ երկու երկրները դարձան անկախ հանրապետություններ և երևան եկան սահմանային խնդիրները:

Սա էլ այն միջոցներից է, որով Խորհրդային Միությունը Հայաստանի մայրուղին թողել է Ադրբեջանի հսկողության տակ, սակայն մինչև վերջերս հանրության համար տպագրված բոլոր քարտեզներում, որոնցից է Պատ. 3.15–ի քարտեզը, ցույց է տրվում, որ հայկական M–2 մայրուղին ամբողջովին անցնում է Հայաստանի ինքնիշխան տարածքով, որն իրականությանը չի համապատասխանում:



Պատ. 3.15. Հայաստանում հրատարակված այս քարտեզում, ինչպես նաև հանրության համար հրատարակված բոլոր այլ քարտեզներում, ցույց է տրված, թե ինչպես է հայկական մայրուղին անցնում միմիայն Հայաստանի տարածքով:

Ինչպես նշվեց, սահմանն այսպիսին էր 1930–ականներից, մինչդեռ ճանապարհը կառուցվել է 1950–ականներին խորհրդային ճանապարհաշինության պլանով: Ահա ինչպիսի ճանապարհ է կառուցել Խորհրդային Միությունը, որով մեր մայրուղին մի քանի անգամ հատում է Ադրբեջանի սահմանը: Առաջացած խնդիրները մեր առջև են ծառացել այսօր, իսկ բացատրությունները բացակայում են:

Պատ. 3.16. Սա Հայաստանի պաշտպանության նախարարության ունեցած և 1969–1970 թթ. Հայաստանի և Ադրբեջանի իշխանությունների կողմից վավերացված, ստորագրված և կնքված Սև լճի շրջանի միջհանրապետական քարտեզն է, որտեղ սահմանը նշված է սև գծով։

Այս սահմանը հաստատված է նաև 2010 թ. Հայաստանի ներքին՝ վարչական տարածքների սահմանների վավերացմամբ, որտեղ առկա են նաև սահմանային շրջանները։

Պատ. 3.17. Ադրբեջանցիների կողմից կեղծված այս քարտեզում Սև լիճն ու դրա հարավը, ինչպես նաև Իշխանասարը Ադրբեջանինն են։ Ադրբեջանի զինուժի ներկայացուցիչը այս քարտեզը ներկայացնում է Հայաստանի զինուժին որպես միջհանրապետական իրական սահման։ Քարտեզն անտեսում է հենց Ադրբեջանի իշխանությունների վավերացրած սահմանները, որոնք ներկայացված են Պատ. 3.16–ի քարտեզում։



Պատ. 3.18. Ավելի մանրակրկիտ այս քարտեզում կարելի է տեսնել Սև լճի և դրան հարակից տարածքը: Սևով գծվածը ԽՍՀՄ գլխավոր շտաբի կողմից գծված և փոխադարձ հաստատված սահմանն է, որը վավերացվել է Ադրբեջանի և Հայաստանի իշխանությունների կողմից 1970 թ., իսկ կարմիր գիծը ցույց է տալիս սահմանի այն հատվածները, որոնք, կեղծելով քարտեզը, Ադրբեջանը 2021 թ. ներառել է իր երկրի տարածքում՝ յուրացնելով բավական մեծ հողամասեր:

Սահմանների վավերացման համար տեսեք Պատ. 3.16–ը, իսկ Ադրբեջանի կեղծած քարտեզի համար տեսեք Պատ. 3.17–ը:

ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Պատկեր համար	Բացատրություն	Թվական
ԳԼՈՒԽ 1		
1.1	21–րդ դարի Աշխարհացույց	2000
1.2	16–րդ դարի Աշխարհացույց	1595
1.3	10–րդ դարի Աշխարհացույց	10 դ.
1.4	Հայերեն միջնադարյան Աշխարհացույց	13–14 դդ.
ԳԼՈՒԽ 2		
2.1	Բեհիսթունյան սեպագիր արձանագրություն	517 թ. մ.թ.ա.
2.2	Նույնի մեկ հատվածի թարգմանությունը	517 թ. մ.թ.ա.
2.3	Բաբելոնյան կավե սալիկ Աշխարհացույց	6 դ. մ.թ.ա.
2.4	Նույնի թարգմանությունը	6 դ. մ.թ.ա.
2.5	Հերոդոտոսի Աշխարհացույցը	450 թ. մ.թ.ա.
2.6	Տիգրան Մեծի Հայաստանը	1875 թ.
2.7	Հատված Պտղոմեոսի Աշխարհացույցից	2–րդ դար
2.8	Պտղոմեոսի Աշխարհացույցից Հայաստանի քարտեզը	2–րդ դար
2.9	Բեատոսի Աշխարհացույցը	8–րդ դար
2.10	Հարավային Կովկասը իսլամական քարտեզում	10–րդ դար
2.11	Կիլիկիայի հայկական թագավորությունը	12–14 դդ.
2.12	Ֆրանսիական Աշխարհացույց	12–րդ դար
2.13ա	Օրտելիոսի Աշխարհացույցը	1595 թ.
2.13բ	Միջին արևելքը Օրտելիոսի Աշխարհացույցից	1595 թ.
2.14	Մեծ և Փոքր Հայքերը Հուստինիանոսի օրոք, 527 թ.	1653 թ.
2.15	Հոմանի՝ Օսմանյան կայսրության քարտեզը	1748 թ.
2.16	Հատված Ֆռա Մաուրոյի Աշխարհացույց քարտեզից	1460 թ.
2.17	Հատված Դյու Վալի Միջին արևելքի քարտեզից	1676 թ.
2.18	Իրանի քարտեզն ըստ Չելեբիի	1732 թ.
2.19	ԳիյոմԴելիլի Հարավային Կովկասի քարտեզից հատված	1730 թ.
2.20	Անդրկովկասը ըստ Ցուցիևի 1881–1888 թթ.	2007 թ.
2.21	Անդրկովկասը ըստ Ցուցիևի 1829–1839 թթ.	2007 թ.
2.22	Օսմանյան կայսրության ռազմական քարտեզը	1877 թ.
2.23	Թյուրքախոս երկրների գոտին, որը հատում է Հայաստանը:	2000 թ.
ԳԼՈՒԽ 3		
3.1	Հայաստանի տարածքը ըստ Սևրի բանակցությունների	1920 թ.
3.2	Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնական տարածքը	1917 թ.
3.3	Խորհրդային Ռուսաստանի Դաշնությանը հանձնված Հայաստանը	1920 թ.
3.4	Ստալինի և Կովկասյան բյուրոյի Ադրբեջանին տված տարածքները	1921 թ.
3.5	Հայաստանի սահմանները ապրիլ 1, 1926 թ. ԽՍՀՄ մեծ հանրագ.	1926 թ.
3.6	Խորհրդային Հայաստանի քարտեզը 1926–ի մարդահամարի ժամանակ	1927 թ.

3.7	Հայաստանի քարտեզը առանց անկլավների	1932 թ.
3.8	Հայաստանի քարտեզը 2 անկլավով	1938 թ.
3.9	Հայաստանի քարտեզը 3 անկլավով	1940 թ.
3.10	Հայաստանի՝ Ադրբեջանի կողմից բռնագրավված տարածքները	1985 թ.
3.11	Ալ լաճերի տարածքի սահմանների փոփոխումը	1929 թ.
3.12	Տիգրանաշենի անկլավն այսօր	1971 թ.
3.13	Տավուշի մարզի անկլավներն ու ճանապարհը	1971 թ.
3.14	Գորիս–Կապան ճանապարհը ներկայում	1971 թ.
3.15	Գորիս–Կապան ճանապարհն ըստ 2013 թ. հայկական քարտեզի	2013 թ.
3.16	Սև Լճի շրջանի երկկողմ վավերացված քարտեզը	1970 թ.
3.17	Սև Լճի շրջանի՝ Ադրբեջանի կեղծած սահմանը	2021 թ.
3.18	Սև Լճի շրջանի վավերացված և կեղծված սահմանները	2022 թ.

ԿԱՐԵՎՈՐ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ադրբեջան կամ Ատրպատական — Իրանի հյուսիսարևմտյան նահանգը, որի հին անվանումը Փոքր Մարաստան էր, և ի պատիվ իրենց Ատրոպատ զորավարի՝ նրա մահվանից հետո անվանվեց նրա անունով՝ Ատրոպատեն: Հայերենում այդ անվանումը պահպանվել է որպես Ատրպատական, սակայն արաբների գերիշխանության ներքո և լեզվի փոփոխության պատճառով տրոհվել ու դարձել է Ադորբիգան, Ադերբիջան, Ազերբիջան ու Ազերբայջան:

Ադրբեջանի Հանրապետություն — Արաքսից հյուսիս 1918 թ. հիմնադրված նոր երկիր, որն իր անունը վերցրել է Իրանի Ատրպատական–Ադրբեջան նահանգից: Մինչ այդ Արաքսից հյուսիս ընկած տարածքում այս անունը ոչ մի քարտեզի վրա գոյություն չի ունեցել:

Ազերի լեզու — Պարսկական փեհլեվի լեզվի բարբառներից, որը կիրառվում էր Իրանի Ադրբեջան–Ատրպատական նահանգում մինչև 15–16 րդ դդ.: Դրանից հետո աստիճանաբար այս լեզվին փոխարինեց տեղում նոր հաստատված և իշխող ցեղախմբերի թուրքերեն լեզուն: Ներկա Ադրբեջանի Հանրապետությունն իր լեզուն անվանում է ազերի, որը հատուկ միտումով կեղծիք է, քանի որ նրանց լեզուն թուրքերենն է, իսկ ազերի լեզուն Ատրպատականի բնիկների հնամենի՝ հնդեվրոպական լեզուն էր:

Անկլավ — Տվյալ երկրի տարածքում գտնվող հողամաս, որը պատկանում է հարևան երկրին և դրա ինքնիշխան մասն է կազմում:

Աղվանք կամ Կովկասյան Ալբանիա — Երկրամաս Կասպից ծովից արևմուտք, Կուր գետից հյուսիս գտնվող տարածքում: Ըստ Ստրաբոնի՝ այնտեղ բնակվում էին 26 ցեղախմբեր, որոնք խոսում էին տարբեր լեզուներով: Չորրորդ դարում նրանց մեծ մասն ընդունեց քրիստոնեություն, բայց արաբների ներխուժումից հետո նրանցից շատերն աստիճանաբար ընդունեցին իսլամը: Արաբներն ու պարսիկները աշխարհամասն անվանում են Առռան:

Բեատոս Լիբենացի (շուրջ 730–800 թթ.) — Իսպանացի կղերական, «Ապոկալիպսին» աշխատության հեղինակ, որի մեջ զետեղված է նրա պատկերած միջնադարյան աշխարհացույցը:

Դե Լիլ Գիյոմ (1675–1726 թթ.) — 18–րդ դարի մեծագույն ֆրանսիացի քարտեզագետ, որն առաջին անգամ հրատարակեց Կասպից ծովի ճշգրիտ քարտեզը:

Իրան կամ Պարսկաստան — Հնագույն երկիր Կասպից ծովից հարավ՝ մինչև Պարսից ծոց: Երկու հնագույն երկրամասեր Մարաստանն ու Պարթևաստանը, իրար միանալով, հիմնադրեցին Իրանի կայսրությունը, որի Կյուրոս արքան մարդկանց իրավունքների առաջին հռչակագրի հեղինակն է:

Լեռնային Ղարաբաղ — Աշխարհագրական տարածք, որը մինչև 20–րդ դարը ընդգրկում էր հիմնականում հայաբնակ տարածքներից ներկայիս Արցախը, Քարվաճառ–Քալբաջարը և Քաշաթաղ–Լաչինի շրջանները:

Կենտրոնական Ասիայի հանրապետություններ — Թյուրքալեզու ու պարսկալեզու հինգ Խորհրդային հանրապետություններ, որոնք ԽՍՀՄ–ն ստեղծեց 1923–1936 թթ., նախկինում որպես Թյուրքեստան ընդհանուր անունով կոչված տարածքում: Այստեղ հիմնականում բնակվում էին տարբեր քոչվոր ցեղախմբեր: Այստեղ էին նաև հին իրանական մշակույթի կենտրոններից Մերվը, Սամարղանդը, Բուխարան և այլ քաղաքներ:

Հերոդոտոս (484–425 թթ. մ.թ.ա.) — Հույն պատմաբան, որը ճանաչված է որպես պատմագրության հիմնադիր:

Մերկատոր Ջերարդուս (1512–1594 թթ.) — Ֆլամանդացի քարտեզագետ, 16–դ դարի մեծագույն քարտեզագետներից, ում հրատարակած «Աշխարհի ատլասն» առաջիններից էր: Ապագայում նրա քարտեզներից շատերն ընդօրինակվել ու վերահրատարակվել են:

Պտղոմեոս Կլավդիոս (շուրջ 100–170 թթ.)– Ալեքսանդրիացի հույն մեծագույն քարտեզագետ, ում քարտեզ կազմելու կարգն ու մեթոդները նույնությամբ գործածվում էին ավելի քան 1500 տարի: Նրա գրչին են պատկանում հնագույն քարտեզները: Ճանաչված է նաև որպես քարտեզագրության հիմնադիր:

Ստրաբոն (շուրջ 63 թ. մ.թ.ա–24 թ.)– Հույն աշխարհագրագետ, ում ամենակարևոր գործն է «Աշխարհագրություն» կոչված 17 հատորանոց աշխատությունը: Այս հատորներում 60 էջ հատկացված է Հայաստանի՝ Մեծ ու Փոքր Հայքերի պատմությանն ու աշխարհագրությանը: Նա ճանաչված է որպես աշխարհագիտության կնքահայր:

Տիգրան Երկրորդ կամ Տիգրան Մեծ (140–55 թթ. մ.թ.ա.) — Հայոց արքա, որը գրավել էր Կասպից ծովից մինչև Միջերկրական ծովի արևելքը՝ ներառյալ Միջագետքը, Սիրիան և Կիլիկիան:

Փոքր Մարաստան — Իրանյան կայսրության մաս կազմող Մարաստան երկրի հյուսիսային շրջանը, որը համընկնում է ներկա Իրանի Ատրպատական նահանգի տարածքին, որն անվանափոխվեց Ատրոպատեն: Տե՛ս Ադրբեջանի բացատրությունը:

Քյաթիբ Չելեբի (1609–1657 թթ.) — Առաջին օսմանյան քարտեզագետը, որը, ճամփորդելով Միջին Արևելքում, գրել է իր «Աշխարհացույց» հատորը և գծել մի քանի քարտեզ, որոնց մեջ են Վանի քարտեզը՝ հայերի մասին իր բացատրություններով, ու նույնիսկ Հայկի ու Բելի առասպելը:

Օրտելիոս Աբրահամ (1528–1598 թթ.) — Հոլանդացի հանրահայտ քարտեզագետ, ում ատլասները թարգմանվել ու հրատարակվել են մի քանի լեզուներով ամբողջ Եվրոպայում:

Ֆռա Մաուրո (1400–1464 թթ.) — Վենետիկցի վանական քարտեզագետ, որը 1459 թ. իսպանացիների պատվերով կազմել է հսկա Աշխարհացույց քարտեզ, որը պարունակում է ճանաչված աշխարհի վերաբերյալ մանրակրկիտ տեղեկություններ: Այս քարտեզում առաջին անգամ լատինատառ նշվում է Ղարաբաղ անվանումը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան — Աշոտ Մելքոնյան 3

Հեղինակի խոսքը 4

Ներածական 5

Գլուխ 1. Քարտեզների պատկերումը տարբեր ժամանակներում 11

Գլուխ 2. Հայաստանը օտարների 2600 տարվա քարտեզներում 15

Գլուխ 3. Հայաստանի հանրապետությունների սահմանները 37

Քարտեզների ցուցակ 55

Կարևոր անվանումների բառարան 57

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ 2600 ՏԱՐՎԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհագրական, քարտեզագրական և պատմական

իրավիճակի փոփոխությունները

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Համակարգչային ձևավորումը՝ Ռուբեն Գալչյանի
Համակարգչային էջադրումը՝ Ժագ Թոփալաքյանի
Վերստուգող սրբագրիչ՝ Նունիկ Ավետիսյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60×90 1/8
Թուղթը՝ կավճապատ: Ծավալը՝ 7,5 տպ. մամուլ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+374 10) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak



Գերմանացի քարտեզագետ Ֆոն Սպրուների 1855 թ. «Հնագույն Ատլաս»–ից Հայաստանի, Միջագետքի, Բաբելոնի, Ասորեստանի և հարակից երկրների քարտեզը: Նշված է Փոքր Ասիան իր տասնյակ երկրներով, որոնք բոլորն էլ այժմ անհետացած են: Ներկայում դրանցից միայն առկա են Հայաստանն ու Ատրպատեն/Ատրպատականը՝ որպես ներկա Մեդիա/Իրանի Ադրբեջան նահանգ: Արցախը, Սյունիքն ու Նախիջևանը նշված են Մեծ Հայքի տարածքում՝ ընդգծված կարմիրով:

Ռուբեն Գալչյանի հավաքածու, Երևան, Մատենադարան, Ref. RG33

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆԻ ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԸ

Ծնվել է Թավրիզում՝ Մեծ եղեռնի ժամանակ Վանից տարագրված գաղթականների ընտանիքում, որը, Հայաստանի, Վրաստանի և Ֆրանսիայի ճանապարհները հատելով, հասել էր Թավրիզ: Թեհրանում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո կրթաթոշակ է ստացել՝ սովորելու Բրիտանիայի Բիրմինգհեմ քաղաքում, որտեղ ուսանել է ճարտարագիտություն:

1970–ականներին լրջորեն սկսել է աշխարհագրական հետազոտությունները՝ որպես զբաղմունք (հոբբի): 1981 թ. տեղափոխվելով Լոնդոն՝ առիթ է ունեցել հետազոտելու Բրիտանիայի և Եվրոպայի գրադարաններում եղած քարտեզագրական հարուստ ժառանգությունն ու ծավալուն տեղեկությունները:

2008 թ. Հայաստանի քարտեզագրությանը մատուցած ծառայությունների համար Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան նրան շնորհել է պատվավոր դոկտորի կոչում, իսկ 2013 թ. պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

www.roubengalichian.com
www.roubengalchian.com

Գալչյան Ռուբենը Կովկասից հարավ ընկած տարածքի քարտեզագիտության և մշակույթի պատմության հետազոտող է, որի ուշադրության կենտրոնում են պատմական և ներկա Հայաստանի տարածքներն ու սահմանները: Հայաստանը, որպես քրիստոնյա երկիր, սեպի նման մխրճված է երկու թյուրքախոս հանրապետությունների՝ Թուրքիայի և Ադրբեջանի միջև: Այս աշխարհագրական իրավիճակը ծայրահեղականներին առիթ է տվել ստեղծելու բազմաթիվ քաղաքական, մշակութային և ազգագրական խնդիրներ: Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի թյուրքախոս ժողովուրդներին իրար կապելով թյուրքական երկրների գոտի ստեղծելու Օսմանյան Թուրքիայի ծրագրի իրագործումն ունի մեկ խոչընդոտ՝ Հայաստանի գոյությունը: Այս ծրագրի սկիզբն էր Հայոց ցեղասպանությունը, որով Թուրքիան ձերբազատվեց հայերից: Խորհրդային Միության փլուզումից հետո Ադրբեջանի Հանրապետության իշխանություններն աշխատում են ամեն ինչ անել, որ հայ ժողովրդին, որը ապրել ու արարել է իր հայրենի բնաշխարհում ավելի քան երեք հազարամյակ, եկվորներ կոչեն: Ամեն ջանք գործադրվում է հայկական պատմական հուշարձաններն ու մշակույթը տարածքից վերացնելու կամ դրանք յուրացնելու նպատակով: Այս ուղղությամբ հիմնվում են շինծու տեսություններ, համատարած կատարվում են պատմամշակութային զեղծարարություններ:

Աշխատությանս նպատակն է ընթերցողին ներկայացնել, թե դարերի ընթացքում ինչպես են օտարներն ընկալել ու ցուցադրել Հայաստանն իրենց քարտեզներում, նույնիսկ երբ Հայաստանը որպես անկախ պետություն ժամակավորապես դադարել էր իր գոյությունը: Նաև այն, թե ինչպես են 1918 թ. անկախությունից հետո հարևանները յուրացրել Հայաստանի տարածքներն ու փոփոխել սահմանները:

9 789939 689753

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

www.zangak.am
www.book.am